

3-4(577-578)

14.02.2020

Չրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԴԱՍԵՐ, ՈՐՈՆԵՐ ԵՐԲԵՔ ԶԵՆ ՓՈՒՏՎՈՒՄ

Փետրվար ամիսը տարբեր հուզականության դրսևորումների ամիս է: Եթե փորձենք հատկապես լույս արցախյան ազատասիրական պոռթկման մեկնարկը, որ հեռավոր 1988թ. փետրվարի 13-ին էր, ապա պիտի հիշենք նաև, որ դրանից օրեր անց՝ փետրվարի 22-ին, տեղի ունեցավ առաջին արյունալի բախումը աղղամցիների ու ասկերանցիների միջև Ասկերանում: Դրան անմիջապես հաջորդեց Սումգայիթը, որը նորոյր Ադանան էր՝ յուրակերպ դաժան ու անմարդկային:

Իսկ հետո՝ չորս տարի անց, իրականացվեց ազերի հրոսակախմբերից հստակալուի ազատագրումը. փայլուն մի ռազմագործողություն, որը մեր հայաստանյաց հարևաններն առ այսօր չեն կարողանում մարտել, ուստի ճարահատյալ նենգափոխում են իրականությունը: Ասել է թե՛ փետրվար ամիսն էր մեզ մարմնավորում է և՛ հայատություն, և՛ ցավ, և՛ մշտական զգոնության կոչ:

Իսկ գլխավոր-հավաքական ձեռքբերումը, թերևս, մեր ժողովրդի արժանապատվության հաստատումն է, որ սերունդներին իրար կապող ոսկե օղակ է դարձել: Արցախյան առաջին պատերազմի տարիներին և քսաներկու տարի անց՝ արիւյան պատերազմի ժամանակ, հայրենիքի պաշտպանները երկու տարբեր սերունդներ էին, որոնք տողորված էին նույն հերոսականությամբ: Կասկած չկա, որ եթե ոստիը նորից փորձի ոտնձգություն անել մեր անկախ պետականության դեմ, գալիք սերունդները դարձյալ նույն նվիրվածությամբ կկանգնեն հայրենավորության խրամատներում:


Բայց բանը միայն ռազմադաշտում խիզախումների մեջ չէ, մեր հավաքական արժանապատվությունը արտահայտվում է նաև Արցախի համապարփակ զարգացման ու ժողովրդավարության լիարժեք արմատավորման գործընթացում: Նկատենք՝ դա սկսվում է դպրոցից, որովհետև, ինչպես գիտենք, ապագա գինվորը, պատգամավորը կամ գործարարը ձևավորվում են կրթարաններում՝ մեսրոպյան այբուբենի ուսուցումից մինչև հայրենասիրական դաստիարակություն: Այս իմաստով լուրջ անելիքներ ունեցել ենք, ունենք և կունենանք:

Արժանապատվության գիտակցումը դպրոցականի համար ամենից առաջ պատասխանատվության ու պատրաստակամության զգացումն է պապերից ու հայրերից ժառանգած հայրենիքի հանդեպ: Պատերազմի մշտական վտանգի տակ գոյատևող բոլոր երկրներում էլ այս ֆենոմենալությունը կա, որից զերծ չեն մեծ թե փոքր: Մեր պարագայում, քանի որ փետրվարի անփոփոխ դասերով ենք ապրում ու մեծանում, ունենք անփոփոխ մի ուղերձ՝ լինել ժողովրդովի, բայց ոչ՝ անբխականական, արդարադատ, բայց ոչ՝ ինքնիրավազան, պահանջատեր, բայց ոչ՝ ժխտողական:

Այսինքն՝ լինել միակամ ու միասնական, այլապես փետրվարի մեր հուզական դրսևորումներում կմնան միայն ցավն ու ափսոսանքը: Մենք պարզապես դրա իրավունքը չունենք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Վահան ՏԵՐՅԱՆ - 135



Մայրենիի միամսյակ

«Լեզուն ազգի հոգին է, կենդանի է լեզուն, կենդանի է ազգը, կենսունակ է առաջինը, ուրեմն կենսունակ է և երկրորդը»:

Վ. ՏԵՐՅԱՆ

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդի ինքնության գլխավոր պայմանը մայրենի լեզուն է եղել: Ազգի լեզուն նրա հավատն է, արժանապատվությունը, անցյալն ու ապագան: Հենց այս արժեքներով ենք դարբերում գոյատևել՝ հաճախ բախվելով այլ քաղաքակրթական արժեքների հետ: Այդ բախումները, ցավոք, ուղեկցվել են հայ էթնոսի համար ծանր կորուստներով, բայց թեկուզ այդպիսի կարողացել ենք ՀԱՅ մնալ:

Այս համապատկերում փետրվարի 21-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ որպես Մայրենիի օր պաշտոնապես նշելը, թերևս, գուտ խորհրդանշական իմաստ ունի: Բնականաբար, ՅՈՒՆԵՍԿՕ-ն կարևոր նախաձեռնություն է ցուցաբերել՝ հիշեցնելով ամեն մի ժողովրդի համար մայրենի լեզվի անուրանալի դերի ու նշանակության մասին: Բայց չնոռանանք, որ դա վերաբերում է աշխարհի բոլոր ազգերին, և այս հիմքով չէ միայն, որ մայրենի լեզուն պետք է հատուկ գուրգուրանքի արժանանա հայերիս կողմից: Խորհրդային տարիներին ընդհանուր պետության մեջ ռուսերենի գերակայության պայմաններում կար լեզվի ուժացման վտանգ, որի մասին սակավ է խոսվել մեզ պարտադրված «ինտերնացիոնալ» հանդուրժողականության պատճառով: Եվ միայն ամենահամարձակներն են կարողացել ահազանգել այդ վտանգի հնարավոր հետևանքների մասին: Հիշենք Հովհաննես Ծիրագի հանրահայտ տողերը, որոնք կարելի է լեզվապահպանության յուրօրինակ հիմն անվանել. «Վառքի խոսքս ու կրակով վայրէք բերանն այն հայոց, /Որ մայր լեզվի բերդ չեն դարձնում բերանն իրենց տղայոց: /Որ թաղում են հայոց տիսակն, այլոց հավքին կյանք տալիս, /Վառքն նրան, ում

Մի՛ խառնեք մե՞ք Ձեր ՎԱՅՐԻ, ԱՐԶԻ ՅԵՂԵՐԻՆ

Մի՛ խառնեք մե՞ք Ձեր վայրի, արջի ցեղերին - Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին:

Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ծյուն, Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Բարեկունն է եղել մեր ախոյանը՝ տես - Անհետ կորել, անցել է - չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մեր թշնամին - ահա՛, Դաշտ է տեղը, և չըկա քար քարի վրա:

Ամրակուռ է մեր հոգին - դարերի գավակ Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք. Լաց է այնտեղ ամեն երգ, և ողբ ամեն գիրք:

Գերված ենք մենք, ոչ ստրուկ - գերված մի արծիվ, Չարության դեմ վեհսիրտ միշտ, վատի դեմ ազնիվ:

Բարբարոսներ շատ կըզան ու կանցնեն անհետ, Արքայական խոսքը մեր կըմնա հավետ:

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծուլ, և՛ օտար, Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար:

Եզիպտական բուրգերը փոշի կըդառնան, Արևի պես, երկիր իմ, կըվառվես վառման:

Որպես փյունիկ կրակից կելնես, կելնես նոր Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացիր, սիրտ իմ, ել հավատով տոկուն, Կանգնիր հպարտ, որպես լույս լեռն է մեր կանգուն:

ՄԵՐ ԼԵՋՈՒՆ՝ ՄԵՐ ՏՈՒՆԸ

մար մայրենի լեզվի անուրանալի դերի ու նշանակության մասին:

Ֆայց չնոռանանք, որ դա վերաբերում է աշխարհի բոլոր ազգերին, և այս հիմքով չէ միայն, որ մայրենի լեզուն պետք է հատուկ գուրգուրանքի արժանանա հայերիս կողմից: Խորհրդային տարիներին ընդհանուր պետության մեջ ռուսերենի գերակայության պայմաններում կար լեզվի ուժացման վտանգ, որի մասին սակավ է խոսվել մեզ պարտադրված «ինտերնացիոնալ» հանդուրժողականության պատճառով: Եվ միայն ամենահամարձակներն են կարողացել ահազանգել այդ վտանգի հնարավոր հետևանքների մասին: Հիշենք Հովհաննես Ծիրագի հանրահայտ տողերը, որոնք կարելի է լեզվապահպանության յուրօրինակ հիմն անվանել. «Վառքի խոսքս ու կրակով վայրէք բերանն այն հայոց, /Որ մայր լեզվի բերդ չեն դարձնում բերանն իրենց տղայոց: /Որ թաղում են հայոց տիսակն, այլոց հավքին կյանք տալիս, /Վառքն նրան, ում

ծնունդով Մաշտոցն աշխարհի չի գալիս»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հիշյալ որոշմանն ի համերաշխություն՝ փետրվարի 21-ը մի քանի տարի անց ներառվել է նաև մեր պետական տոնացույցում, և ամեն տարի այս օրը Արցախում ևս, հատկապես կրթօջախներում նշվում է տարաբնույթ միջոցառումների կազմակերպմամբ: Միջոցառումների մակարդակով չէ, սակայն, որ պիտի գնահատել մայրենիի հանդեպ սերը. այն պիտի դրսևորվի պարբերաբար, մեր ամենօրյա կրթաբերմունքի մեջ: Եթե խորհրդային տարիներին լուրջ սպառնալիք էր ռուսախոսությունը, ապա հիմա մեր բառապաշարում սկսվել է լայն տարածում գտնել անգլերենը: Դա պայմանավորված է առօրյա կյանքում աստիճանաբար ավելի լայն կիրառություն գտնող «համացանցային լեզվով», որի բազմաթիվ տերմինները թեպետ հայերենում ունեն իրենց համարժեքը, սակայն շատերը, տուրք տալով ձևամոլությամբ, նախընտրում են օտարաբան ընդհանուր օտարաբան շփոթում: Արտաքին աշխարհի հետ արդյունավետ շփումն, անկասկած, անձի զարգացման համար կարևոր խթան է համդիսանում, և լեզուներ իմանալն այս առումով անհրաժեշտ գործոն է: Բայց այլ բան է տարբեր լեզուների տիրապետելը, այլ բան՝ սեփական լեզուն երկրորդական դասելը: Օտարամոլության նման դրսևորումները կարելի է համեմատել օտարասիրության հետ, ինչը ցանկացած ազգի համար «ոտքի տակի ական է»: Եվ հատկապես մեծ սպիտակ ունեցող հայ ժողովրդի համար լեզվապահպանությունը պետք է առաջնահերթ խնդիր դառնա ցանկացած պատրաստությամբ:

«Հայի լեզուն տունն է հայուն».

Մուշեղ Իշխանի այս պատգամը բոլոր ժամանակների համար է ասված: Տարվա բոլոր օրերին էլ սիրենք, փայփայենք ու պաշտպանենք մեր հայ լեզուն: Հանուն մեր մշտագոյության:

Ս. ԽԱԶՍՏՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐԶԵՏՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԱՐԱՆՈՒՄ ԲԱՅՎՈՒՄ ԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ



Մարտի 9-ից Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում կսկսեն գործել կարի արտադրության և փայտամշակման նախապատրաստական խմբեր, որոնցում կարող են ընդգրկվել հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները: «Քրիստոնյաները կարիքի մեջ» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ այստեղ ընթանում է երկու նոր արհեստանոցների շինարարությունը, որոնք շահագործման պատրաստ կլինեն մարտի մեկին: Ուսումնարանի փոխտնօրեն Վարդուհի Բալայանից տեղեկացանք հաստատությանն սպասվող բարենորոգումների մասին:

«Քրիստոնյաները կարիքի մեջ» կազմակերպության (2020-ից այն վերափոխվել է հիմնադրամի) ընդարձակելով տնտեսական, կրթական և մշակութային ծրագրերն Արցախում) հետ ուսումնարանի համագործակցությունը սկսվել է ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի միջնորդությամբ՝ անցյալ տարվանից:

Նպատակ ունենալով Արցախում զարգացնել սպասարկման ոլորտի ծառայությունների որակը, խթանել այդ ոլորտի կրթությունը՝ նախարարությունը Վարդուհի Բալայանին, որը «Քրիստոնյաները կարիքի մեջ» կազմակերպության անդամ է, անցյալ տարվա հոկտեմբերին փորձուսուցման նպատակով գործուղել է Իտալիա՝ ծանոթանալու տեղի նմանատիպ կրթական հաստատություններից մեկի գործունեությանը:

Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի նոր արհեստանոցների կառուցումը նույնպես իրականացվում է իտալացիների կողմից, որոնց աջակցությամբ դրանք կվերագինվեն, ու նրանց մասնակցությամբ կսկսվեն առաջիկա դասընթացները:

Արդեն 14 տարի է՝ Ստեփանակերտում գործում է արհեստագործական ուսումնարան: Առաջին տարիներին այստեղ ուսուցանվող մասնագիտությունների ցանկում ընդգրկված էր կարի արտադրությունը, սակայն, ինչպես ասաց փոխտնօրենը, սովորողների խումբ այդպես էլ չի ձևավորվել նյութատեխնիկական բազայի պակասի պատճառով: Փայտամշակման արհեստանոց ունեին, բայց իտալացիների աջակցությամբ

ևս մեկը կունենան՝ ավելի կատարելագործված, ժամանակակից պահանջներին համահունչ:

Վ. Բալայանը փորձուսուցում է անցել Իտալիայի Կարատեբրիանցիա քաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունում, որն իրականացնում է նաև միջին մասնագիտական ծրագիր և անվանվում է դպրոց կամ քոլեջ:

Նախ ասենք, որ Իտալիայում արցախցի մասնակարծը շատ լավ ընդունելության է արժանացել: Իտալացիներին հետաքրքրել է մեր ազգի պատմությունը: «Ուսումնարանի ուսանողների ուժերով քաղաքի թատրոնի շենքում բեմադրություն է ներկայացվել, որից առաջ հայտարարվել է, որ Արցախից հյուր ունեն, ու որոշ տեղեկություններ են տվել մեր երկրի մասին: Այնուհետև խոսքը տրամադրել են ինձ: Շուրջ կես ժամ են ելույթ են ունեցել հայոց պատմության, Ցեղասպանության, Արցախյան շարժման մասին: Հաջորդ օրը դաս են անցկացրել դպրոցում Կոմիտասի «Կռունկի» և «Գլե յամանի» երաժշտության ներքո»,- Իտալիայում անցկացրած փորձուսուցման օրերից որոշ դրվագներ պատմեց Վ.Բալայանը:

Իտալական այդ քոլեջում ուսուցանվում են Ստեփանակերտի արհեստագործական ուսուցանվող մասնագիտությունների՝ խոհարարական գործ, վարսահարդարություն, կար ու ձև, փայտամշակման գործ, հյուրանոցային տնտեսություն, հրուշակագործություն և այլն:

ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄՈՎ



Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Արարատ Մելքունյանի նախաձեռնությամբ հունվարի 28-ին շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժինը հրավիրել էր խորհրդակցություն՝ ամփոփելու ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքները, որը նպատակ էր հետապնդում նաև նպաստել ուսումնասիրությունների արդյունքում շրջանի ուսումնական հաստատություններում ի հայտ եկած թերությունների՝ մինչև ուսումնական տարվա ավարտը վերացմանը, խրախուսել ոլորտի բարեխիղճ աշխատողներին:

Խորհրդակցությանը ներկա էին ԱՂ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, կրթության պետական տեսչության պետ Մանվել Մխիթարյանը, ԳԹԿ տնօրեն Յուրի Զարամյանը, շրջանի հանրակրթական, նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններ, ուսուցիչներ, դաստիարակներ:

Բացման խոսքով հանդես եկավ շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Ջորիկ Ղուլյանը: Բաժնի վարիչը նախ շնորհավորեց բոլորին Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի կապակցությամբ, այնուհետև զեկուցեց 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակում շրջանի ուսումնական հաստատություններում կատարած աշխատանքների և առկա խնդիրների մասին: «Շրջանում 2019-2020 ուստարում գործում են 36 հանրակրթական դպրոցներ՝ իրենց 7 մասնաճյուղերով, որից 24-ը՝ միջնակարգ (2-ը՝ հոսքային), 12-ը հիմնական դպրոցներ են՝ 3642 սովորողով: Հանրակրթական դպրոցներում կոմպլեկտավորվել է 357 դասարան-համակազմ: Դպրոցներում առկա է 1230 աշխատող, որից 829-ը համապատասխան բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներ են:

Ուսումնական տարվա սկզբին շրջվարչակազմի ղեկավարի կարգադրությամբ ստուգումներ են իրականացվել շրջանի հանրակրթական ուսումնական հաստատություններում, որոնց արդյունքում ի հայտ են եկել հետևյալ թերությունները. դպրոցներում հիմնականում խախտվում է աշխատողների աշխատանքային ռեժիմը, ուսուցիչները դասերին ներկայանում են

առանց պլան-սեղմագրերի, որոշ դպրոցների բակերի ու շենքերի սանիտարահիգիենիկ վիճակն անբավարար է, որոշ աշխատողների աշխատանքային պլանները ձևական բնույթ են կրում և չեն իրագործվում, ուսուցիչների մի մասը դասերին ներկայանում է անպատրաստ, առավելագույնը լիցքային վարժություններ չեն կատարվում, տնօրենների և փոխտնօրենների կողմից բավարար քանակությամբ դասալուծումներ չեն արվում, գրեթե բոլոր դպրոցներում խմբակային ժամերը բաշխվում են ուսուցիչների ժամաքանակը լրացնելու նպատակով: Թերություններ են արձանագրվել նաև լաբորատորիաներում, գրադարաններում, առարկայական կաբինետներում և այլն: Ի հայտ բերված թերությունները վերացնելու նպատակով բաժնի կողմից ցուցաբերվել է համապատասխան մեթոդական օգնություն, ինչպես նաև շրջվարչակազմի ղեկավարի կարգադրությամբ կիրառվել են կարգապահական տույժեր, իսկ առավել բարեխիղճ աշխատողներն արժանացել են պատվոգրերի: Նշվեց, որ վերոնշյալ թերությունները, համաձայն դպրոցների տնօրենների և ներկայացրած զեկուցագրերի, հիմնականում վերացվել են:

Հաշվետու ժամանակահատվածում դիմում-բողոքների հիման վրա շրջվարչակազմի ղեկավարի կարգադրությամբ ստեղծվել են համաձայնագրված և իրականացվել մանկավարժական ու վարչատնտեսական գործունեության ուսումնասիրություններ, ըստ որոնց կազմվել են զեկույց-առաջարկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և անց են կացվել ուսուցիչների ու դաստիարակների թափուր աշխատատեղերի համալրման մրցույթներ, որոնց մասնակցել են 41 ուսուցիչ և դաստիարակ: Արդյունքում աշխատանքի են ընդունվել 14 ուսուցիչ, 1 զինղեկ և 4 դաստիարակ: Սակայն առկա են թափուր տեղեր, որոնք ընդհանրապես չեն համալրվում: Օրինակ՝ Բերդաշենի, Ջիվանու, Քերթի դպրոցներում՝ մաթեմատիկա, Կադրծու, Նորչենի դպրոցներում՝ ֆիզիկա, Սոսի, Կոլխուզաշենի դպրոցներում՝ քիմիա առարկաներից և այլն: Ձ.Ղուլյանը մանրամասն ներկայացրեց սպորտի ոլորտում, արտադպրոցական

հաստատություններում՝ Մարտունու մանկապատանեկան մարզադպրոցի, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի գործունեությունն ու հաշվետու ժամանակահատվածում արձանագրած հաջողությունները: Ամփոփեց առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի արդյունքները:

Բաժնի վարիչը ԿԳՍ նախարարին ներկայացրեց մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են համակարգի աշխատանքների արդյունավետությանը, դրանց վերաբերյալ կատարեց առաջարկություններ:

Ելույթներով հանդես եկան Մարտունու հ.1 հոսքային-միջնակարգ դպրոցի տնօրեն Կարինե Պողոսյանը, հ. 2 դպրոցի տնօրեն Միհրան Ջիվանյանը, Կարմիր շուկայի միջնակարգ դպրոցի տնօրեն Էդիկ Բադալյանը, Բերդաշենի պետական մանկապարտեզի տնօրեն Լիլյա Ասրյանը:

Այնուհետև «Մարտունու շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և ներառական կրթության մասնագետների գործունեության մասին ներկայացրեց տնօրեն Գարեգին Մայիլյանը:

Կարևորելով նախադպրոցական ուսումնական հաստատությունների դերակատարությունը կրթական ոլորտում՝ հաշվետու ժամանակահատվածի կատարած աշխատանքների մասին զեկուցեց շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի առաջատար մասնագետ Անուշ Դովսեփյանը:

Ելույթների ընթացքում կատարված առաջարկությունների և մասնակիցների կողմից առաջարկված հարցերի շուրջ պարզաբանումներ արեց ԳԹԿ տնօրեն Յու. Քարամյանը: Նա ուսուցիչներին կոչ արեց արտաքին գրավորների ժամանակ պահպանել կարգ ու կանոնը, պետական ավարտական և փոխադրական քննությունների ժամանակ զննահատել օբյեկտիվ, որպեսզի ցածր կարողություններով աշակերտը չհայտնվի ավագ դասարաններում: Հատուկ ուշադրություն դարձրեց ներառական կրթությանը, նշեց, որ ոլորտում չլուծված խնդիրներ և անելիքներ դեռևս շատ կան:

Բավականին ընդգրկվում էր Ն.Աղաբալյանի ելույթը: Նա ողջունեց շրջվարչակազմի ղեկավարի նախաձեռնությունը, նշեց, որ նախադեպը չունեցող խորհրդակցությունը թույլ է տալիս տեսնել որտեղ ինչ խնդիր է առկա և հնարավորության սահմաններում շտկել: Ընդգծեց, որ ուսումնական գործընթացում հաջողությունները չեն որոշվում միայն օլիմպիադաների ու սպորտային միջոցառումների արդյունքներով: Մանկավարժներին կոչ արեց լինել ակտիվ, մասնակցել կազմակերպվող կրթական ֆորումներին ու դասընթացներին, համայնքների և դպրոցների գար-

ՄԻ ԲՈՒՅՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՂԵԳՆՈՒՄԻ ԴՊՐՈՅՈՒՄ

Այս վերջին օրերի միջոցառումները մեր համայնքի դպրոցականների կյանքում հաստատ իրենց դրոշմը կրողն են:

Շահունյանի շրջանի Եղեգնուտի Պ.Ղևոնդյանի անվան միջնակարգ դպրոցում միջոցառում էր՝ նվիրված Հայոց բանակի 28-րդ տարեդարձին: Միջոցառման մասնակիցներն իրենց խոսքով, երգով և պարով արժևորեցին մեր բանակի անպարտելիությունը: Բանակ, որը պահպանել է մեր նախնիների խիզախությունն ու քաջությունը, հպարտությունն ու անսահման հայրենասիրությունը: Յուրաքանչյուրի խոսքը հնչում էր այնպես, կարծես վաղը նրանք պետք է գրավեն այսօրվա զինվորի տեղը, որը պաշտպանում է Հայոց սուրբ հողը: Ներկաներն ըմբռնվեցին հայի ոգու զինական ու մարտերում թոժված պատմական պատառիկներ:

Միջոցառումը համեմված էր ազգային երգ ու պարով, հայրենասիրական հոգեթով երգերով:

Երկրորդ օրը կրկին միջոցառում էր սպասվում դպրոցում, բայց այս անգամ արդեն ինտելեկտուալ խաղի տեսքով:

Խաղին մասնակցում էին դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորող աշակերտները հավաքական թիմերով: Մասնակից խմբերը կրում էին հայ ազգային հերոսների անուններ՝ Անդրանիկ, Նժդեհ, Մոնթե: Բավականին լարված ու թեժ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեց առավել ակտիվ և պատրաստված «Անդրանիկ» թիմը: Վիկտորիան ընդգրկվում էր ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ տրամաբանական մի շարք հարցեր: Խաղն անցավ շատ ջերմ մթնոլորտում: Աշակերտները մեծ ակտիվությամբ և հետաքրքրությամբ էին մասնակցում խաղին: Թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները մեծ բավականություն ստացան:

Երրորդ օրը Պետրոս Ղևոնդյանի ծննդյան տարեդարձն էր, որը զոհվել է Եղեգնուտ համայնքից ոչ հեռու գտնվող ժայռի լանջին՝ իր մարտական ընկերոջը ակամապատ տարածքից դուրս բերելիս, որի պատվին էլ կոչվում է դպրոցը: Դպրոցի մանկավարժական և աշակերտական համակազմը մի ավանդույթ ունի: Ամեն տարի նույն օրը, ինչպես նաև Պետոյի մահվան օրն այցելում են այս հուշաքարին, որտեղ իրենց խորին խոնարհումն ու խնկարկումն են բերում: Շարունակելով ավանդույթը՝ դպրոցի ՄԴԿ կազմակերպիչ Ելենա Գրիգորյանը հուշաքարի մոտ անցկացրեց տպավորիչ հուշ-ցերեկույթ, որտեղ ներկայացնելով Պետոյի անցած մարտական ուղին՝ երեխաները կատարեցին հայրենասիրական երգեր, ասմունքեցին, ծաղիկներ խոնարհեցին՝ խոստամալով, որ հերոսի կյանքի գնով զոհված այս հուղակտորը հավատարմորեն կպահեն:

ՆՊԵՆՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆ ՈՒ ՄԵՑ ՎԱՅՐԵՆԱՍԵՐԸ



նա աշխատում է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի խորհրդական, «Բարակապատ համակարգերի մեխանիկա» բաժնի վարիչ: 2000-2006թթ. և 2011-ից առ այսօր ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ է, իսկ 2016 թվականից՝ ՀՀ ԳԱԱ «Մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի» ակադեմիկոս-քարտուղար: Համատեղության կարգով բազմաթիվ տարիներ դասախոսել է ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում:

կանության մաթեմատիկական տեսության դասական ձեռքբերումների շարքը: Կառուցված ասիմպտոտիկ տեսությունները հիմք են ծառայում վարկածային հենքի վրա կառուցված սալերի և թաղանթների կիրառական-երկչափ տեսություններին ճշգրիտ գնահատականներ տալու և նրանց կիրառելիության սահմանները որոշելու համար:

տարվող ուսումնասիրությունները երկրաշարժերի առաջացման պատճառների վերհանման և նրանց հնարավոր կանխագուշակման ասպարեզում: Լ. Աղալովյանի տեսական և կիրառական խորը ուսումնասիրությունները բազմիցս արժանացել են խոշոր միջազգային դրամաշնորհների (Soros, INTAS, ISTC և այլն):

ինստիտուտի տնօրենի պաշտոնում 1990-ականների դժվար տարիներին գիտական այդ խոշոր օջախի պահպանման և հետագա զարգացման գործում:

Հայ հասարակության մեջ չափազանց բարձր է գնահատվում Լ. Աղալովյանի ազգային, հասարակական-քաղաքական լուրջ գործունեությունը՝ հատկապես Հայրենիքի և Արցախի համար դժվարագույն ժամանակներում:

Լ. Աղալովյանը իր համախոհների և գործընկերների հետ միասին հիմնադրում (1991թ.) և ղեկավարում է «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը՝ մեծ գործ կատարելով Արցախի անցկույն ժողովրդի տոկունությունը և նրա հերոսական բանակի մարտունակությունը մշտապես բարձր պահելու համար:

Այժմ էլ չափազանց լուրջ, ծանրակշիռ և լայնածավալ գիտական աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման այդ վեհ գործերից գատ, որպես ազգային-հասարակական գործիչ՝ Լ. Աղալովյանը քաղաքական մեծ ակտիվություն է ցուցաբերում Արցախի հիմնահարցի վերջնական և արդարացի լուծման գործում: Նշենք թեկուզ այս պահին www.diplomat.am կայքում (հեղինակներ) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղադրված նրա «Ստատուս-քվոյի պահպանումը՝ Ղարաբաղյան հիմնահարցի լուծման Եվրոպական բանալի» լայնածավալ վերլուծական հոդվածը:

Շնորհավորում են իմ Ուսուցչին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Աղալովյանին 80-ամյա հորելյանի կապակցությամբ, ցանկանում են նրան քաջառողջություն, երկար տարիների կյանք, նորանոր հաջողություններ գիտական, գիտակազմակերպչական և ազգային-քաղաքական գործունեության բոլոր ասպարեզներում:

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Լրացավ ակադեմիկոս գիտնական-մեխանիկոս, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ազգային-հասարակական հայտնի գործիչ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Լեններ Աբգարի Աղալովյանի ծննդյան 80-ամյակը:

Լ. Աղալովյանը ծնվել է 1940 թվականի փետրվարի 3-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղում՝ մանկավարժի ընտանիքում: 1961թ. գերագանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1966-ին նրան շնորհվում է ֆիզմաթ գիտությունների թեկնածուի, իսկ 1980թ.՝ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1996թ. Լ. Աղալովյանը ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Աշխատանքային գործունեությունը Լ. Աղալովյանը սկսել է 1961 թվականից՝ աշխատելով որպես ասիստենտ Երևանի պետական համալսարանի տեսական մեխանիկայի ամբիոնում: 1966-1969թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում՝ որպես ավագ դասախոս: 1969-ից մինչև 1987 թվականը աշխատել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: Լ. Աղալովյանը 1987-2006թթ. եղել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենը: Ծննդյան 65-ամյակից հետո, 2006 թվականից

Լ. Աղալովյանի մենագրությունները (Л.А.Агаловян "Асимптотическая теория анизотропных пластин и оболочек". М. Наука, 1997. 415 стр. և Агаловян Л.А., Геворгян Р.С. "Неклассические краевые задачи анизотропных балок, пластин и оболочек". Ереван. Изд. "Гитутюн" НАН РА, 2005. 468 стр., Aghalovyan L.A. "Asymptotic theory of anisotropic plates and shells". Singapore-London. World Scientific Publ. 2015. 376p.) զգալի ներդրում են տեսական և կիրառական մեխանիկայի մի այնպիսի կարևորագույն ոլորտում, ինչպիսին բարակ մարմինների մեխանիկայի բնագավառն է: Այդ բնագավառում նա էապես զարգացրել է կիրառական մաթեմատիկայի այնպիսի հզորագույն մեթոդներից մեկը, ինչպիսին ասիմպտոտիկ մեթոդն է: Դասական եզրային պայմանների առկայությամբ մաթեմատիկական կատարյալ նրբությամբ Լ. Աղալովյանը կառուցել է անհզուրոպ շերտավոր ձողերի, սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները, որոնք տեսական հիմք են հանդիսանում ժամանակակից կոմպոզիտ նյութերից պատրաստված կառուցվածքների, մեթենամների ու մեխանիզմների տարրերի հաշվարկման և նախագծման համար: Նրա կողմից կառուցված ձողերի, սալերի և թաղանթների սահմանային շերտի տեսությունը այնքան կատարյալ է և ամբողջական, որ այն կարելի է դասել առաձգա-

Հանդերհանուր ճանաչում ստացան Լ. Աղալովյանի աշխատությունները, որոնցում առաջին անգամ կառուցվեցին անհզուրոպ շերտավոր ձողերի, սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները, երբ տրված են համարվում ոչ դասական բնույթի եզրային պայմաններ: Կառուցված տեսությունները հնարավորություն ընձեռեցին ուսումնասիրելու և լուծելու անհզուրոպ, շերտավոր սալերի և թաղանթների ամրության, սեփական և ստիպողական տատանումների, ջերմառածակնության, ինչպես նաև ոչ գծային դրվածքով կարևոր նշանակության բազմաբնույթ խնդիրներ: Ոչ դասական բնույթի եզրային պայմանների առկայությամբ անհզուրոպ շերտավոր ձողերի, սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսությունները նաև էական ներդրում են նշանակությամբ չափազանց մեծ կիրառական այնպիսի լայնածավալ ոլորտում, ինչպիսին շինարարական կառուցվածքների հիմքերն են ու հիմնատակերը, ինչպես նաև կիրառական սեյսմաբանությունը: Կիրառական այս նշանակալից ոլորտում մինչև վերջերս հաշվարկանախագծային աշխատանքներում կիրառվում էին համարյա կիսափորձական բանաձևեր և առնչություններ: Լ. Աղալովյանի տեսական ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին ստանալու արդեն տեսական ճշգրիտ բանաձևեր, այսպես կոչված «Ճերքնակային գործակիցների» հաշվման, սեյսմիկ ալիքների տարածման դիմադրական բնութագրիչների որոշման համար: Հեռանկարային են Լ. Աղալովյանի մոտեցումը և

Լ. Աղալովյանի գիտական գործունեությանը բնորոշ են արդիականությունը, նորարարությունը, բազմակողմանիությունը և նպատակաուղղվածությունը: Նրա գիտական հոդվածները, միջազգային գիտաժողովների զեկուցումները, ընդհանրացնող, ամփոփիչ հոդվածները հայտնի են և ուսումնասիրվում են Ռուսաստանի, Եվրամիության, ԱՄՆ-ի և աշխարհի այլ երկրների համապատասխան գիտական կենտրոններում:

Ակադեմիկոս Լ. Աղալովյանի հիմնարար գիտական արդյունքները լայնորեն հայտնի են Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Նա Մեխանիկայի եվրոպական ընկերության, Հայաստանի և Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեների, Հիմնությունների վերահսկման Եվրոպական ասոցիացիայի, ինչպես նաև Ուկրաինայի, Լատվիայի, Հայաստանի և Արցախի հեղինակավոր գիտական հանդեսների խմբագրությունների անդամ է:

Լ. Աղալովյանը մեխանիկայի հայկական դպրոցի վառ անհատականություններից մեկն է և իր տաղանդի փայլուն դրսևորմամբ նրանում ստեղծել է բոլորի կողմից ճանաչված և ընդունված արդեն իր ուրույն գիտական դպրոցը: Լ. Աղալովյանի ղեկավարությամբ պաշտպանվել են մի քանի դոկտորական և տասնյակից ավել թեկնածուական ատենախոսություններ: Նա ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտին կից, ՀՀ ԲՈՅ-ի 047 մասնագիտական խորհրդի նախագահն է:

Անգնահատելի են նրա ծառայությունները ՀՀ ԳԱԱ մեխանիկայի

ԲԱՆԱԿԻՃՈՒՄ ԵՆ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ

Համանուն խորագրով խաղ-մրցույթ էր նախաձեռնել Մարտակերտի շրջանի Ծնակահողի հիմնական դպրոցում «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով աշխատող պատմության ուսուցիչ Վահե Հովսեփյանը: Նախաձեռնությանը միացել են Ստեփանակերտի ֆիզմաթ, Քաջաթաղի շրջանի Բերձորի և Ծիծեռնավանքի դպրոցները, որտեղ նույնպես «Դասավանդիր, Հայաստան» ծրագրով աշխատող ուսուցիչներ կան: Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում անցկացված խաղ-մրցույթին մասնակցում էր 8 թիմ. երեքական՝ ֆիզմաթ և Բերձորի, մեկական՝ Ծնակահողի և Ծիծեռնավանքի դպրոցներից: Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր 6 աշակերտ:



բով են սովորում բանավեճի արվեստը: Նման մրցույթ կազմակերպելու միտք հղացել էր նախորդ տարի, բայց հնարավորություն ունեցավ իրականացնել այս տարի Կովկասյան ինստիտուտի՝ Արցախում քաղաքացիական հասարակության ձևավորման ուղղված դրամաշնորհի մասնակցելու և հաղթելու արդյունքում: «Բանավեճում են դպրոցականները» մրցույթի հարցերը հիմնականում դպրոցական կյանքից էին.

- դպրոցում պետք է թույլատրել բջջային հեռախոսներ.
- միջին դասարաններում աշակերտական համագգեստ կրելը պետք է պարտադիր լինի.
- դպրոցում պետք է վերացնել թվանշաններով գնահատման համակարգը.
- ուսուցիչների աշխատավարձի հիմքում

պետք է դրված լինի աշակերտների առաջադիմության ցուցանիշը.

- տնտեսական աճն ավելի կարևոր է, քան՝ շրջակա միջավայրի պահպանությունը.
 - հեռուստատեսության ազդեցությունը բացասական է.
 - ծնողները պետք է պատժվեն իրենց երեխաների սխալների համար:
- Մրցույթն անցավ երեք փուլով: Առաջին փուլում հաղթող դարձավ 4 թիմ, երկրորդ փուլում՝ երկու, իսկ եզրափակիչ երրորդ փուլում՝ երկու թիմերից մեկը: Մրցույթի նպատակը երեխաների քննադատական մտածողության զարգացումն է, ինչը բավականին հաջող ստացվեց: Բանավեճի թիմերը կարողացան հիմնավորված ներկայացնել իրենց փաստարկները:
- Եզրափակիչ փուլ անցան Բերձորից «Ալֆա» և «Մենք ենք ու մեր Բերձորը» թիմերը: Վերջնական արդյունքում հաղթող ճանաչվեց «Ալֆա»-ն: Բոլոր մասնակիցները պարգևատրվեցին հավաստագրով, իսկ հաղթող թիմը՝ նաև գրքերով:

Ս. ՊԱՐԻԵՆՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ՐՄՈՒՄԻ ՄԱՍՆԱԳԵՏ ՊԱՏՐԱՍՏԵԼՆ Է

Մարտունու վաղիկ հաջատրյանի անվան արհեստագործական ուսումնարանը գործում է 1973 թվականից: Ստեղծման պահից մինչև այսօր ուսումնարանի նպատակն անփոփոխ է՝ թողարկել մասնագետներ, որոնք իրենց նպաստը կրեն երկրի գյուղատնտեսության զարգացման գործում:

Այսօր առավել քան երբևէ մեր երկրում խնդիր ունենք բանիմաց ու արհեստավարժ գյուղատնտեսական տեխնիկայի մասնագետների:



«Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական սպասարկում», «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», «Եռանկյուն աշխատանքների տեխնոլոգիա»... արևը ուսումնարանի այն բաժիններն են, որոնց թողարկած մասնագետների պահանջարկը մեծ է: Ուսումնարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արդա Մովսիսյանը ցավով արձանագրեց, որ նախորդ տարիների համեմատությամբ սովորողների թիվը նվազել է:

Արցախը գյուղատնտեսական երկիր է, իսկ տրակտորը գյուղատնտեսության ոլորտում առանցքային նշանակություն ունեցող տեխնիկա է: Վարպետ Դանիելյանը, կարևորելով տրակտորիստի դերակատարությունը գյուղատնտեսական աշխատանքներում, ընդգծեց, որ գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավարն իրականացնում է տարբեր բնակլիմայական գոտիներում տրակտորային ագրեգատներով հողի հիմնական, նախաքային, միջշարային և միջբնային մշակում, կատարում ցանքսի, սածիլների, պալարապտուղների և տնկիների տնկում, սնուցում, մոլախոտերի և հիվանդությունների դեմ պայքարի, բերքահավաքի, մթերքների և տարբեր տեսակի բեռների բեռման, տեղափոխման և բեռնաթափման աշխատանքներ, տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական խնամք, սպասարկում, ընթացիկ նորոգում և պահպանում:

Հունվարի 22-ին արհեստագործական ուսումնարանի տրակտորիստների 2-րդ կուրսում 2019-2020 ուստարում ԱՅ ԿԳՄ նախարարության կողմից «Լավագույն վարպետ» կոչմանն արժանացած Օ.Դանիելյանը կազմակերպել էր բաց դաս՝ «Սննդամ համակարգի տեխնիկական վիճակի ստուգումը» թեմայով: Արտադրական դասն անցկացվեց «Վարանդաշին» ՓԲԸ-ի նորոգման և տեխսպասարկման արհեստանոցում: Դասը նպատակ ուներ ստուգելու սովորողների գիտելիքներն ու կարողությունները գործնականում, որի ընթացքում յուրաքանչյուր սովորող պետք է կարողանա ինքնուրույն ստուգել սննդամ համակարգի տեխնիկական վիճակը:

Թեման ներկայացնելուց հետո վարպետը կատարեց աշխատանքի բաժանում, տվեց իրահանգներ, բացատրեց անվտանգության կանոնները: Հանձնարարություններն ստանալուց հետո սովորողներն անցան իրենց գործին: Ապագա տրակտորիստներն ուսումնարանում

ստացած գիտելիքներով ու հմտություններով կատարեցին առաջադրանքը և վերականգնեցին սննդամ համակարգի անսարքությունը: Բացի սննդամ համակարգի տեխնիկական ստուգումից կատարեցին նաև այլ աշխատանքներ՝ գուբանի իրանի վերականգնում, յուղման համակարգի տեխսպասարկում, ճանապարհային խոզանակի տեխնիկական սպասարկում և այլն: Բաց դասին ներկա վարպետները հետևեցին ընթացքին, հարցեր ուղղեցին սովորողներին և ստացան գոհացուցիչ պատասխաններ:

Վարպետ Դանիելյանը տեղեկացրեց, որ խմբի արտադրական ժամերը միշտ կազմակերպվում են «Վարանդաշին» ՓԲԸ-ի նորոգման և տեխսպասարկման արհեստանոցում, ինչի կապակցությամբ շնորհակալություն հայտնեց ընկերության տնօրինությանը: «Բնականաբար ուսումնարանում չկան ուսումնական գործընթացում պահանջվող բոլոր սարքավորումներն ու տեխնիկական միջոցները, բայց այստեղ մեր սովորողները հնարավորություն ունեն ոչ միայն տեսնելու, այլև պահանջվող աշխատանքը կատարելու: Տեսական գիտելիքները երբեք չեն կարող տալ այն արդյունավետությունը, որը հնարավոր է ստանալ գործնական պարապմունքների ժամանակ», - ընդգծեց վարպետը: Նա նշեց, որ իր խմբի ուսանողները շրջանի տարբեր գյուղերից են:

Նվեր և Միեր Ասրյանները Նորչենից են: Երկվորյակ եղբայրներն ասացին, որ ուսումնարանում ստացած գիտելիքների շնորհիվ գյուղում կատարում են գյուղատնտեսական աշխատանքներ և գուժար վաստակում: Տղաները սիրով են անում այդ գործը և անկեղծանում են, որ



հետագայում նույնպես կաշխատեն իրենց մասնագիտությամբ:

Չնայած ցուրտ եղանակային պայմաններին, խմբի բոլոր ուսանողները պատասխանատվությամբ ու սիրով կատարեցին առաջադրանքները: Վարպետը ստուգեց և դասամատյանում նշանակեց գնահատականներ: Դասի ավարտից հետո եղավ քննարկում: Օ.Դանիելյանը նշեց, որ հասել է իր նպատակին: Կարծիքներով կիսվեցին դասին ներկա վարպետներն ու ուսումնարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արդա Մովսիսյանը: Կարևորելով նման դասերի կազմակերպման անհրաժեշտությունը՝ վարպետները բաց դասը գնահատեցին լավ:

Վարպետ Դանիելյանը ավարտելով դասը՝ վստահ նշեց, որ ուսումնարանի շրջանավարտների մեծ մասը կդառնա հմուտ մասնագետներ ու հպարտությամբ հավելեց. «Մենք թողարկում ենք ոչ միայն տրակտորիստներ, այլև տանկիստներ, որովհետև երկու տեխնիկաների դեպքում էլ մեխանիզմը նույնն է»: Վարպետն այս խոսքը պատահական չի ասում: Արցախյան ազատագրական պայքարում ուսումնարանի մեխանիկ շրջանավարտներն իրենց գիտելիքները կիրառեցին ռազմական տեխնիկայի վրա: Ավանդույթ դարձած գործընթացը շարունակվում է:

Ա. ԱՍՐԻԱՐԱՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՇԵՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՆԱՐԱՆՈՒՄ ԲԱՅՎՈՒՄ ԵՆ ՆԱԽՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

1 Սակայն՝ մի տարբերությամբ. «Մեր խոհարարը կարող է միայն խոհանոցում աշխատել, ուրիշ ոչ մի տեղ: Մեր խոհարարը չի կարող սպասարհում աշխատել, որովհետև մենք մեր երեխաներին դա չենք սովորեցնում՝ մտածելով, որ խոհարարը պետք է կոնկրետ խոհարարությամբ զբաղվի: Իսկ խոհակոչների մոտ լրիվ ուրիշ կարգ է: Նույն խմբի երեխաները միաժամանակ կարողանում են մի քանի աշխատանք կատարել: Ասենք, եթե մի քանի հոգի աշխատում են ռեստորանի խոհանոցում, նրանցից երկուսը դեսերտն է պատրաստում, խմորեղենը, երկուսը՝ ճաշատեսակներ, աղանդերներ, մի երկուսն էլ անմիջապես տվյալ դպրոցի բարում, որտեղից դասամիջոցներին օգտվում են սովորողներն ու ուսուցիչները: Իսկ մի 4-5-ը աշխատում են հաստատության ներսում գործող ռեստորանում՝ որպես մատուցողներ, երկու հոգի՝ որպես մենեջերներ: Հաջորդ օրը սովորողները տեղերը փոխում են: Ու այդ երեխաներն ավարտելուց հետո շատ մեծ փորձ են ձեռք բերում. կարող են աշխատել և որպես խոհարար, և՛ հրուշակագործ, և՛ մենեջեր, և՛ բարմեն, և՛ մատուցող»: Այսինքն՝ Վ.Բալայանի տեսած դպրոց-քոլեջում լայն պրոֆիլի մասնագետներ են պատրաստում: Նրա կարծիքով դա ավելի արդյունավետ կրթություն է, քանի որ տվյալ մասնագետն աշխատաշուկայում ավելի պահանջված է:

անցկացնում նրանց և ծնողների հետ, որպեսզի մարտի 9-ից սկսվող դասընթացների համար քանակակազմ հավաքի: Ցանկացողները դպրոցի դասերից հետո շաբաթական 2-3 անգամ հաճախելու են արհեստագործական ուսումնարանի նախապատրաստական խմբեր, որտեղ նրանց հետ պարապմունքներ են անցկացնելու Իտալիայից ժամանած վարպետները՝ փայտագործներ, դերձակներ: Նախատեսվում է նաև իտալերենի ուսուցում: Նրանք կստանան հավաստագիր, իսկ սեպտեմբերի 1-ին կընդունվեն ուսումնարան:

Վ. Բալայանն ասաց նաև, որ պայմանավորվել են իտալացիների հետ ուսանողների փոխանակում կատարել. այս տարի 5 ուսանող Արցախից փորձուսուցման կենտրոնի իրենց մոտ, 5 ուսանող էլ այնտեղից կգա այստեղ: Առաջին տարում որոշել են խոհարարների ուղարկել:

Փոխտնօրենը նպատակահարմար է գտնում ուսումնարանի հանրակրթական ծրագրերում փոփոխություններ կատարել: Նրա կարծիքով պետք է մտցնել «Էկոնոմիկա», «Մշակույթ», «Էթիկա» առարկաները, լեզուներ. «Ազգային խոհանոց մաս է ազգային մշակույթի, հետևաբար խոհարարը պետք է լավ իմանա այն: Նույնը էլ՝ փայտագործը: Ինչո՞ւ նա օտար զարդանախշերով դրվագա-



Մարտի 9-ից բացվող արհեստանոցների և անցկացվող դասընթացների համար խոհակոչներն ուղարկել են անհրաժեշտ սարքավորումներն ու նյութերը: Վ. Բալայանն իտալացիների ներկայացրել է նաև տվյալ մասնագիտությունների համար փորձուսուցման սեփական բազա ունենալու և արտադրություն կազմակերպելու ծրագիր, ինչը սիրով ընդունվել է: Նպատակ կա Ստեփանակերտում բացել ռեստորանային համալիր, որտեղ գործնական պարապմունքներ կանցկացնեն ուսումնարանի սովորողները:

Նույն ձևով էլ վարսահարդարների համար ստեղծել համապատասխան բազա, որտեղ նրանք ծառայություններ կմատուցեն բնակչությանը և գուժար կվաստակեն: Կար անողները պատվերներ վերցնեն, ուսումնարանը համագործակցի տարբեր կազմակերպությունների հետ (հիվանդանոցներ, մանկապարտեզներ)՝ իրացնելու արտադրանք, ինչու չէ, նաև ամհատական պատվերներ կատարեն, եկամուտ ստանան: Ուսումնարանն ունենա արտաբյուջետային միջոցներ, որոնք գոյանան իր բիզնեսից: Այդ բյուջեի հաշվին ուսումնարանը սովորողներին վերջին կուրսում վերապատրաստման ուղարկի Հայաստան, արտասահման: Այդպես և՛ սովորողների մոտ շահագրգռություն կառաջանա, և՛ ուսումնարանի բյուջեն կհամալրվի, և՛ հաստատությունն աստիճանաբար կդառնա ինքնաբավ, կարծում է փոխտնօրենը՝ ասելով.

զարդի կահույքը, այլ ոչ թե մեր ազգային: Նույնն էլ՝ դերձակը: Ինչո՞ւ ենք ասում, որ սպասարկման ոլորտը զարգացած չէ մեզ մոտ, որովհետև այդ ծառայությունները մատուցողները լավ չեն տիրապետում նույնիսկ մասնագիտական էթիկայի, հասարակության հետ շփման, բարեկրթության նորմերին: Իսկ մենք ուզում ենք, որ զբոսաշրջությունը զարգանա մեր երկրում: Բնականաբար, օտար լեզվի իմացությունն էլ շատ կարևոր է»:

Այսքանից հետո կարծել, թե արհեստագործական ուսումնարան պետք է դիմեն թույլ կարողություններով երեխաները, ինչպես նախկինում, և ցայսօր էլ այդ մտայնությունն է տիրում, ճիշտ չէ: Բոլոր բնագավառներում էլ ինչքան անձը խորացված լինի իր մասնագիտության մեջ, իսկ այդպիսին դառնում են կրթությամբ և ինքնակրթությամբ, այնքան նա բարձրակարգ մասնագետ կլինի, հետևապես և, պահանջված՝ աշխատաշուկայում:



Ինչպես տեղեկացանք փոխտնօրենից, Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում աշխատող վարպետները բոլորն էլ բարձրագույնավարտ են, բայց աշխատում են իրենց երկրորդ մասնագիտությամբ՝ արհեստով, տանը, դրսում, ուսումնարանում:

Հավելեց, որ այստեղ սովորողների (230 հոգի) 60 տոկոսը շրջաններից են, 40 տոկոսը՝ Ստեփանակերտից: Ուսումն անվճար է, սովորողները ստանում են կրթաթոշակ, իսկ շրջաններից եկածները՝ նաև 15-հազարական դրամ բնակարանի վարձի փոխհատուցում:

«Քրիստոնյաները կարիքի մեջ» հիմնադրամը նախաձեռնել է նաև տարբեր ոլորտների արցախցի երիտասարդների անվճար փորձուսուցում Իտալիայում: Հիմնադրամի կազմում ստեղծված հանձնաժողովը մի շարք ուղղվածություններով՝ պանի, մասնաբաժնի, հացաբուլկեղենի արտադրության, հյուրանոցային ծառայությունների, վարսավիրական գործի, գինեգործության, դեղաբույսերի վերամշակման տեխնոլոգիայի, ընտրել է արցախցի 12 երիտասարդների՝ Իտալիայում հունիս-հուլիս ամիսներին փորձուսուցում անցնելու համար:

Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ

ՖԻԶԻԿԱ

ԼԵՈՒՆ ԳԱԳԱԹԻՆ ՎԱՌՎՈՂ ԽԱՐՈՒՅԿԸ

Չմռան սառնաշունչ գիշերը մոլորված օտարականը քայլում է անծանոթ, քարքարոտ ճանապարհով՝ խարխալեղով խավարում, դողալով ցրտից ու վախից, ամեն պահ սպասելով մթնոն տռնացող գիշատիչների հարձակմանը: Հանկարծ հեռվում մի լույս է նշմարվում: Նման է կրակի, բայց թե ինչ է դա՝ խարո՞ւյկ, տան ճրագ, գուցե որևէ կայա՞ն, դժվար էր որոշել: Կարևորը, որ հազիվ նկատելի ու անզան երբեմն-երբեմն տեսադաշտից անհետացող լույսը հույս ծնեց մարդու սրտում: Նրա քայլերն արագացան, սիրտը սկսեց ավելի արագ բաբախել, բայց արդեն՝ հնարավորինս շուտ ապաստարան հասնելու և փրկվելու մտքից: Նա զգաց իր զարկերակը, զգաց ոտքերում ու ձեռքերում թանձրացող ջերմությունը: Թե որքան հեռավորություն է բաժանում իրեն աչքին հազիվ տեսանելի այդ լույսի կետից, մարդը չգիտեր ու չէր էլ մտածում այդ մասին առհասարակ: Մարմնի ամեն մի բջջով, իր ողջ էությանը ինքն արդեն զգում էր դրանից գատվող ջերմությունը:

Այսօր մեր կրթական համակարգը գտնվում է վերոհիշյալ օտարականի անմախքանձեղի վիճակում: Քայլում է իրեն անծանոթ ճանապարհով՝ խարխալեղով խավարում, բայց հեռու-հեռվում լեռան գագաթին վառվող խարիվը փրկության հույս է ներշնչում: Այդ հույսը ջերմացնում է նրա հոգին, ասել է թե՛ մեր բոլորի հոգինները: Բոլոր նրանց, ում մտահոգում է ազգի գիտական ապագան: Կարծես մի տեսակ մոդայիկ է դարձել այս թեմայի արժարձունք, անհասցե քարկոծունք, բնագիտական առարկաների ողբալի մակարդակի քննադատությունը (որ խորանքը՝ հունանիտարի վիճակն էլ վիճակն է):

Իսկ ես՝ մինչև ուղևոր ծուծը բանասերս, հանձն առա ձեզ ներկայացնել օրերս Խնասպատի միջնակարգ դպրոցում կազմակերպված առարկայական շաբաթը՝ ներկայումս երկրի կրթական վերադասի կողմից ամենամեծ ուշադրություն վայելող Նորին մեծություն Ֆիզիկայից: Ֆիզիկայի հանդեպ այդ աննախադեպ բարձրամակարդակ հոգածությունն այնքան մեծ է, որ թե անավագն 15 տարուց մեր դպրոցները գոնե մեկական Նորեյան մրցանակակիր չտան, աններելի մեղք կլինի ֆիզիկայի ուսուցիչների համար: Մինչ այդ պանծալի օրվան հասնելը վերադառնանք դառն իրականություն, որտեղ ֆիզիկայի ուսուցչուհի Վիկա Գասպարյանը ցուրտ դասասենյակում (փայտե վառարանով ջեռուցվող դասասենյակում հաճախ ջերմաստիճանը չի գերազանցում 9 աստիճանը ըստ Տեխիոսի), ջերմացած լեռան գագաթին վառվող այն խարիվով ու Մարիա Սկլադովսկայա-Կյուրիի գիտական սիրանքներով ոգեշնչված, պարզագույն փորձեր է կատարում իր սաների հետ՝ սրտում պահած թաքուն մի հույս, որ հենց իր սաներից մեկի շնորհիվ ինքը կհամալրի մեծ գյուտարարներին դասավանդած անհայտ ուսուցիչների փառապանծ շարքը: Իսկ ինչո՞ւ ոչ: «Դուք՝ ամանուն, ձեր սաները՝ անվանի», - կասեր Ա.Սահակյանը: Երբ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Գ.Աղաբաբ-

յանն առաջարկեց ֆիզիկայի շաբաթ անցկացնել, ուսուցչուհին սիրով համաձայնեց, և երկուսով իրենց հատուկ ջերմեռանդությամբ գործի լծվեցին: Սակայն սույն նյութիս պատվո հարթակն այս անգամ մտադիր եմ տրամադրել ոչ թե բազմաչափ գործընկերներիս, այլ աշակերտներին: Նորոյա դպրոցականը սովոր չէ շալլ գովեստի խոսքեր լսե-



լում: Ավելի հաճախ նա մեր թերազունների քավության նոխագն է դառնում: Ֆիզիկայի շաբաթվա ընթացքում կատարված դիտարկումներն ապացուցեցին էյնշտեյնի խոսքի ճշմարտացիությունը. «Երևակայությունն ավելի կարևոր է, քան գիտելիքը»: Հենց այս խոսքն էր գրել 10-րդ դասարանի աշակերտ Գոռ Գասպարյանը գրատախտակին իր իսկ ձեռքով նկարած էյնշտեյնի նկարի կողքին: Ինտելեկտուալ խաղի մասնակից թիմերը, մրցատյանն ու հանդիսատեսը վառ երևակայության պատկան չունեին: Խաղում ստացած միավորները պետք է զուևարվելին մինչ այդ կայացած զանազան հետաքրքրաշարժ մրցույթների արդյունքներին: Ուշագրավ էր առաջին փուլի պահանջը. ներկայացնել թիմի անվանումը, կարգախոսը, իսկ մրցակից թիմին յուրօրինակ մաղթանք հղել՝ օգտագործելով ֆիզիկական հասկացություններ: Եվ ահա «Էվրիկա» թիմը հնչեցնում է կարգախոսը.

«Էվրիկա», - գոռաց Արթիմը: Իսկ այսօր արդեն մեզ հասավ հերթը, Որ շարունակենք մեծ ֆիզիկոսի Հաղթական երթը:

Մրցակից թիմերին ուղղված մաղթանքն էլ բանահյուսության նոր ժանր էր, որ կարելի է կոչել «ֆիզիկական անեծք»: «Մրցակից թիմերին մաղթում ենք ուղեղների բացարձակ տորիչելյան դատարկություն», - ասացին նրանք: Ավելի բարյացակամ էր տրամադրված յոթերորդիցիներից կազմավորված

«Էներգիա» թիմը: «Հզոր ամրոց է մեր այս դպրոց, իսկ մենք էլ՝ նրա անսպառ մարտկոցը» կարգախոսին հաջորդեց մրցակիցներին ուղղված բարեմաղթանքը. «Ձեզ մաղթում ենք բարձր դիմադրողականություն, քանզի մեր էներգիան այն քամին է, որ կարող է արմատախիլ անել ձեր ծառերը»:

Թիմային միահամուռ աշխատանք, ավագների մրցույթ, մնախաղ (ներկայացնել նյութի երեք ազդեցատային վիճակները մնախաղի միջոցով), այս ամենին կարելի էր հետևել անվերջ, եթե չլիներ ժամանակային սահմանափակումը: Պայքարը թե՛ էր, էներգիան՝ անսպառ, երևակայությունը՝ սահմաններ չճանաչող: Նախորդ օրերին անցկացված միջոցառումները՝ «Ինչ է թաքցնում սև արկղը», «Լավագույն հուշաթերթիկ», պատի թերթ-վիկտորինա, «Ֆիզիկական բոլորի համար», տնային առաջադրանք՝ «Արտառոց գյուտեր», «Փորձը փորձանք չէ» խորագրով փորձերի կատարում, ամունքի առավոտ՝ «Ֆիզիկան և լիրիկան», պարարտ հող էին նախապատրաստել արգասաբեր աշխատանքի համար: Ֆիզիկայի շաբաթվա պատկերն ամբողջացնող եզրափակիչ վրձնահարվածը պատկանում էր ամենակրտսեր մասնակիցներին՝ յոթերորդիցիներին: Նրանց ջանքերով բեմականացվել էր «Իներգիայի թագավո-



րություն» հեքիաթը: Միջոցառման մշակութային մասի ապահովման համար հենց նրանք էլ արժանացան «Հանդիսատեսի համակրանք» մրցանակին: Միավորային հանրագումարի արդյունքում առաջին տեղը զբաղեցրեց 10-11-րդ միացյալ դասարանների «Շող» թիմը: Հաղթանակած թիմի տղաները՝ Ակսելն ու Գոռը, որոնք իրենց ուսերին էին կրում խաղի հիմնական ծանրությունը, ունեն նաև ֆիզիկայի օլիմպիադային մասնակցության փորձ: Նախորդ տարում Գոռը մասնակցել է նաև հանրապետական փուլին: Առայժմ արդյունքները շոշափելի չեն, ու անզան պարզ չէ՝ տղաները կշարունակեն քայլել ֆիզիկայի՝ անչափ առիթնող, բայց դժվար անցանելի կածաններով, թե՛ նրանց էլ կզերեն, այսպես կոչված, «престижный» մասնագիտությունները: Պարզ է, սակայն, որ բոլոր առեղծված-

ների համար վաղ թե ուշ տրամաբանական բացատրություն գտնող ֆիզիկական մեկընդմիշտ գերել է նրանց հոգիները, ու իրենց իսկ խոստովանությամբ, այն իրենց համար դարձել է լոկ դպրոցական առարկա լինելուց: Ֆիզիկան այն վստահելի ընկերն է, ում կարելի է դիմել դժվար իրավիճակներում խճճված հարցեր լուծելու համար:

Հետաքրքիր էր իմանալ՝ ինչ տվեց ֆիզիկայի շաբաթն աղջիկներին: «Եթե նախկինում ինձ հարցնեին, թե ինչ է ֆիզիկան, ես կպատասխանեի բոլորին քաջ հայտնի արտահայտությամբ բնութային ուսումնասիրող գիտության մասին՝ սկսելով արիստոտելյան «Ֆյուզիս» բառից, - ասում է 12-րդի Աննան: - Իսկ հիմա հասկացա, որ ֆիզիկան ամենուր ինձ հետ է լինելու՝ խոհանոցում, զբոսայգում, գեղեցկության սրահում... Ֆիզիկական բոլոր «ինչու»-ների պատասխանն է»:

Լսում ես մեկին, հետո՝ մյուսին, մոտենում են երրորդն ու չորրորդը, ու զգում ես, որ աճում է ձգողության ուժը քո և այս արտասովոր սերնդի միջև: Ֆիզիկան առիթ էր հերթական անգամ իրենց ծայրը մեզ լսելի դարձնելու (ա՛խ, ծայրի արագություն, որ տեղ ես հասնում տասնյակ տարիներ հետո...): Ֆիզիկան այն գիտությունն է, որ հնարավորություն

է տալիս հազար անգամ սխալվել, անկում ապրել ու նորից վերադառնալ քո ուղեծիր: Հանկարծ հասկանում եմ, որ պետք է վարվել հենց Մեծն Ֆիզիկայի պես. թույլ տալ այս պատանյակներին ու պարմանուհիներին սխալվել, սալթաբել ու ինքնուրույն ոտքի կանգնել: Դեռահասության տարիքը բոլոր ժամանակներում էլ բնորոշվում է որպես ամենաշատ խնդիրներ ծնողը կյանքում: Ի՞նչ ասել արդեն մի սերնդի մասին, որն ապրում է միաժամանակ երկու աշխարհում՝ իրական և վիրտուալ, ու այն, ինչ անհնար է անել իրական աշխարհում, նա հեշտորեն կատարում է մյուսում: Երկու աշխարհների սահմանազտին կանգնած սերունդն ունի սահմաններ չճանաչող երևակայություն, իսկ նման երևակայությամբ օժտվածների համար չափազանց դժվար է անգիր անել օրենքներ, բանաձևեր, կանոններ: Համենայն դեպս, ֆիզիկայի շաբաթը կայացավ ու կայացավ հենց այդ արտասովոր սերնդի ներկայացուցիչների շնորհիվ:

Ազգությամբ սերբ՝ ամերիկացի գյուտարար Նիկոլա Տեսլային իր խելահեղ գյուտերի համար կոչել են «մարդ, որը եկել էր ապագայից»: Ֆիզիկայի շաբաթվա վերջում եզրահանգումս այսպիսին էր. «Այս բոլոր աղջիկներն ու տղաներն էլ ապագայից են: Ու այդ ապագան խոստումնալից է»:

Մեդիա ՄեժԼՈՒՄՅԱԼ ԽՆԱԿԱԿԻ ՄԻՋՆ. ԴԱՊՐՈՑ

«ԱՐՄԱԹԸ» ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՑՈՒՅՆԱԶԱՆՂԵՍՈՒՄ

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաներն այս օրերին ներկայացված են Հարավային Ասիայի ամենախոշոր տեխնոլոգիական ցուցահանդեսին: 16-րդ BASIS SOFTEXPO 2020-ը մասնավոր սեկտորի մեծամասշտաբ ցուցահանդես է, որի նպատակն է ցուցադրել IT և ITES արտադրանքներն ու ծառայությունները: Այն այս տարի ընթացավ Բանգլադեշի մայրաքաղաք Դաքքայում փետրվարի 6-9-ը: «Արմաթը» ցուցահանդեսին մասնակցում էր «Development Innovation Platform» (DIP) ինժեներամի հրավերով, որի հետ նախկինում ստորագրվել է համագործակցության հուշագրով: Հիմնադրամը միտված է տարբեր շրջանակների փոխներգործությամբ (կառավարություն, մասնավոր սեկտոր, գիտական հանրություն) տեխնոլոգիական զարգացման խթանմանը: Հատկանշական է, որ վերջինիս

նպատակների ցանկում որպես առաջնահերթ կետ հստակ նշվում է Բանգլադեշի դպրոցներում «Արմաթ» լաբորատորիաների տեղադրման ու գործարկման անհրաժեշտությունը: «Բազմաթիվ մարդիկ հայտնում են իրենց պատրաստակամությունը՝ աջակցելու ծրագրին, որպեսզի այն հաջող կերպով ներդրվի իրենց երկրում՝ Բանգլադեշում: Հիմնադրամի ներկայացուցիչները բավականին շահագրգռված են այդ գաղափարով: Ցուցահանդեսը դեռ շարունակվում է: Նախատեսվում են հանդիպումներ տարբեր կրթական կառույցների ներկայացուցիչների հետ: Արդյունքները կամփոփենք ցուցահանդեսի ավարտին», - նշեց ցուցահանդեսում «Արմաթի» ներկայացուցիչ Սոֆյա Հարությունյանը: Ցուցահանդեսում «Արմաթը» ներկայացվում է որպես դպրոցներում տեղակայված ին-


ժեներական անվճար լաբորատորիա 10-18 տարեկան երեխաների համար, որը խթանում է աճող սերնդի մոտ ինժեներական հմտությունների զարգացումը: Կազմակերպիչները նաև շեշտում են այն փաստը, որ նախագծի նկատմամբ իրենց հետաքրքրությունն են հայտնել այնպիսի պետություններ, ինչպիսին են Հնդկաստանը, Մոնղոլիան, Վրաստանը, Եթովպիան, Աֆղանստանն ու Ռուսաստանը: «Միջազգային ցուցահանդեսները «Արմաթը» ներկայացնելու կարևորագույն հարթակ են մեր Միության համար, որտեղ հնարավոր է լինում առանձին համախորդների բացատրել տեխնոլոգիայի առանձնահատկությունը», - մեկնաբանում է Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը:

Նշենք նաև, որ ցուցահանդեսին «Արմաթի» հարևանությամբ տեղակայված է US2U անդամ «Instigate» խմբի «Instigate Robotics» ընկերության տաղավարը: «Նախկինում հուշագիր ենք կնքել DIP հիմնադրամի հետ, ըստ որի նրանք ցանկանում են մեր արտադրանքն իրացնել Բանգլադեշում: Ստացանք առաջարկ, որ «Instigate Robotics»-ը և ներկայանա ցուցահանդեսին, ինչից հետո ուղարկեցինք անհրաժեշտ նյութերը, որպեսզի հիմնադրամը դրանք ներկայացնի այցելուներին», - նշեց «Instigate Robotics» ընկերության տնօրեն Սուսաննա Առաքելյանը:

US2U հանրային կայքերի պատասխանատու

ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵՆ ԳԱՆՁԸ՝ ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒՆ



Ստորև ներկայացնում ենք հայ մեծանուն գիտնական, աշխարհահռչակ աստղագետ և աստղաֆիզիկոս փիլոսոփ ՉԱՄՔԱՐՉՈՒՄՅԱՆԻ բացառիկ հարցազրույցը, որը տպագրվել է «Գարուն» ամսագրում (1985թ. հ. 2): Գարունը այսօր էլ հարցազրույցն ամբողջովին նվիրված է հայոց լեզվի դերին ու նշանակությանը մեր կյանքում: Այն ապացուցում է, թե մեծանուն գիտնականին ինչ կատարելությանը է տիրապետել հայերենին ու ինչ ակնածանքով է վերաբերվել դրան, և ինչ նշանակություն է ունեցել նրա համար մեր ոսկեդարը:

- Ինչպե՞ս եք գնահատում լեզվի դերն ու նշանակությունը, նրա զարգացման ընթացքը ներկա փուլում՝ հասարակական կյանքում և գիտության բնագավառում:

- Լեզուն շատ մեծ նշանակություն ունի մեր կյանքում: Դա լավ գիտակցում են բոլոր բնագավառների, ինչպես և գիտության աշխատողները: Մասնավորապես ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչների համար լեզուն ոչ միայն հաղորդակցության, այլև մտածելու, հայտնագործելու շատ կարևոր միջոց է: Որպես այդպիսին՝ լեզուն հասարակության մեջ էլ բոլոր հաղորդակցության միջոցներից ամենակարևորն է: Ասում ենք՝ ամենակարևորը, որովհետև առաջացել ու մշակվել է բնական ճանապարհով: Եթե դա այդպես է, ուրեմն պետք է շատ մեծ ուշադրություն դարձնել լեզվի վրա: Լեզուն պետք է միշտ գործածվի լավ, կատարյալ ձևով, այսինքն՝ տեղին և նպատակասլաց, հետևաբար անհրաժեշտ է, որ նա շարունակ կատարելագործվի, գտվի և դառնա հաղորդակցման, պայքարի սուր զենք:

Չէ՞ որ մենք ուզում ենք, որ մեր երկրի տարբեր մասերի միջև լինի սերտ և ամուր կապ, բացվեն նոր ուղիներ, և ասի մենք հարկադրված ենք միշտ կատարելագործել մեր հաղորդակցության միջոցները, առաջին հերթին՝ լեզուն: Եվ բավական չէ միայն ասել, որ պետք է հատուկ ուշադրություն դարձնել լեզվի կատարելության վրա: Անհրաժեշտ է հետևողական և ջանասեր աշխատանք, և դա պետք է կատարվի շատ խնամքով, մտածված, որովհետև, ի տարբերություն մյուս հաղորդակցության միջոցների, լեզուն, զարգանալով իր բնական հունով, արդեն ունի զարգացում գտած, կատարելագործված իր օրինաչափությունները: Գրեցի այստեղ է, որ մենք պետք է շատ զգույշ լինենք և խուսափենք լեզվի մեջ մուտք գործող արհեստական և չնտածված լեզվական միջոցներից, դիպուկ ու հստակ հաղորդակցումը արատավորող շինժու ձևերից:

Ինչ վերաբերում է հայոց լեզվին, ապա պետք է համոզված և վստահորեն ասել, որ հայոց լեզուն աշխարհի ամենահարուստ, զարգացած և կատարելագործված լեզուներից մեկն է: Մենք գիտենք, որ, օրինակ, բնական գիտությունների բնագավառում հայոց լեզուն որպես լավ մշակված, ճոխ լեզու, հաջողությամբ ծառայում է իր նպատակին՝ դառնալով կատարյալ հաղորդակցության միջոց նաև գիտության բնագավառում: Գրեցի այս հանգամանքն է, որ մեզ ավելի մեծ չափով է պարտավորեցնում, մեզանից՝ գիտության մշակներիցս, պահանջվում է մշտապես հետևել նրա ընթացքին, ճիշտ զարգացմանը, խստորեն հսկել նրա ճիշտ կիրառմանը ոչ միայն գիտության, այլև բոլոր բնագավառներում:

Գրեցի ձեր մասին, որ լեզուն ունի իր որոշակի տրամաբանությունը: Նա արտացոլում է մարդու մտածողու-

թյունը, այլ կերպ ասած՝ մտածելակերպը: Եթե այսպես է, ուրեմն լեզվի կատարելագործման վիճակից շատ մեծ չափով կախված է այն, թե ինչպես է մարդը մտածում և գործում: Ես պետք է ասեմ, որ լեզվի, հատկապես մայրենի լեզվի, ինչպես և նրա առանձին դրսևորումների՝ խոսքի լավ տիրապետումն ու կատարելագործումը էական նշանակություն ունեն սերունդների դաստիարակության, նրանց մտածողության զարգացման համար: Այնպես որ, դա ունի նաև գործնական մեծ նշանակություն: Գրեցի այս տեսակետից էլ մենք պետք է միշտ հոգատար լինենք լեզվի ճիշտ զարգացման նկատմամբ և ավելի ու ավելի ձգտենք նրա կատարելագործմանը: Այժմ մեզանից պահանջվում է, որ մենք իրար հետ խոսենք, գրենք, այսինքն՝ հաղորդակցության մեջ մտնենք միայն ու միայն լավ լեզվով: Իսկ ի՞նչ ենք հասկանում լավ լեզու ասելով: Լավ լեզու ես հասկանում եմ բնական, ժողովրդի ստեղծած և գրականության կողմից մշակված լեզվով խոսելու և գրելու կարողություն: Սա վերաբերում է հայոց լեզվի դրսևորման բոլոր բնագավառներին, հատկապես այժմ, երբ հայոց լեզուն մեր հանրապետության պետական լեզուն է: Մենք կհասնենք ցանկացած արդյունքի, եթե լեզվի մշակույթի գործնական հարցերը լուծենք միայն այդ սկզբունքով: Այս պատվավոր գործում խիստ անհրաժեշտ է հետևողական աշխատանք:

Ես ուզում եմ այստեղ նորից անդրադառնալ գիտության բնագավառին, որովհետև լեզվի ճշգրտության, դիպուկության, խորության և այլ առանձնահատկությունները բացառիկ դեր են կատարում գիտական աշխարհում: Պետք է նկատի ունենալ, անշուշտ, որ գիտությունը այսօր մարդկային գործունեության ամենաարագ աճող, փոփոխվող բնագավառն է, որի հետ միաժամանակ շատ արագ փոփոխվում է նաև գիտական լեզուն: Ես ավելի քան կես դար աշխատում եմ գիտության բնագավառում և նկատել եմ, որ այսօրվա գիտությունը և այն գիտությունը, որ եղել է կես դար առաջ, հսկայական չափերով իրարից տարբերվում են: Շատ են տարբերվում իրարից, ինչ որ այն ժամանակ էինք սովորում և այն, ինչ որ այսօր ենք սովորում: Այսօրվա երիտասարդ գիտական աշխատողը շատ բանով է տարբերվում անցյալի գիտաշխատողից: Նրա վրա մեծ պարտականություն է դրված: Նա այսօր ոչ միայն պետք է լարված հետևի գիտական գաղափարների զարգացմանն ու տարածմանը, այլև պարտավոր է պահովել համապատասխան լեզվական մակարդակ, այլ կերպ գիտական աշխատանքը ցանկալի արդյունքը չի տա: Ուրեմն՝ գիտությունը կարելի է դիտել այս տեսակետից՝ որպես լեզվի զարգացման հետ կապված մարդկային գործունեության ամենակենսունակ ուղղություններից մեկը: Երբ խոսում ենք զարգացած գիտությանը համապա-

տասխան լեզվական մակարդակի մասին, այդ նշանակում է, որ մենք՝ գիտության մշակներս, պետք է ստեղծենք հայոց գիտական լեզուն և հասցենք կատարելության: Գրեցի այդ գիտական լեզուն էլ մեծապես նպաստելու է համաժողովրդական լեզվի զարգացմանը:

- Հայոց լեզվի դրսևորման բնագավառները շատ են, բոլորի մասին անկարելի է խոսել: Մեզ հետաքրքրում է Ձեր կարծիքը դպրոցի՝ այդ բնագավառի լեզվի մասին:

- Լավ ասացիք, վերցնենք թեկուզ հենց այդ բնագավառը, ժողովրդական կրթության բնագավառը, դպրոցը: Այստեղ անչափ կարևոր է հայոց լեզվի ճիշտ կիրառման հարցը: Կիրառելով մայրենի լեզուն դպրոցներում, ճիշտ, կատարյալ ձևով սովորեցնելով խոսել, գրել և կարդալ ընտիր հայերենով, մենք հետապնդում ենք երկու նպատակ: Առաջին նպատակն այն է, որ դրանով մենք օգնում ենք աճող սերունդին, զարգացնում նրա ճիշտ մտածողությունը ու տրամաբանությունը: Լեզուն ինքնին մտածողություն է: Մենք գիտենք, որ մարդն աշխատում է խոսել այնպես, ինչպես մտածում է, բայց չպետք է մոռանալ, որ մտածելու ժամանակ, մտածողության ընթացքում նա զգալի չափով օգտագործում է իր մայրենի լեզուն: Ուրեմն այստեղ՝ դպրոցում, մայրենի լեզվի լավ ուսուցումը, լեզվի կատարյալ ձևերի տիրապետումը լայն ճանապարհ են բացում սովորողների առջև: Ես ուզում եմ իմ միտքը ձևակերպել այսպես: Կատարյալ լեզուն ծնունդ է կատարյալ մտածող, մարդու մտածելակերպը ձևավորվում է լեզվի միջոցով: Լեզվական օրինաչափություններին լավ տիրապետողը հետաքրքրված է ձեռք բերում կուռ տրամաբանություն և ճկուն մտածողություն, որոնցով էլ պայմանավորված են նրա մտածելակերպն ու գործելակերպը:

Երկրորդ կարևոր հանգամանքը, որ կապված է այդ բնագավառի դպրոցի հետ, լեզվի կատարելագործումն ու պահպանումն է: Միաժամանակ ես ուզում եմ ասել, որ այն լեզուն, որից մենք օգտվում ենք, մի մեծ գանձ է: Կարծում եմ, որ մեր հին սերունդներից ստացած հոգևոր գանձերից ամենամեծերից մեկն է, եթե ոչ ամենամեծը: Մեր նախնիներից ժառանգելով այդ գանձը՝ մենք պարտավոր ենք սրբություն պահպանել, մշակել ու կատարելագործել այն, հարստացնել և դրանով ավելի հարստանալ: Այս գործում մեր դպրոցը շատ անելիք ունի: Մյուս կողմից, եթե դպրոցը անտարբեր լինի, պատշաճ մակարդակի վրա չդնի մայրենի լեզվի դասավանդման գործը, շռայլի այդ գանձը, ապա վնաս կհասցնի մեր մշակույթին: Դպրոցը պարտավոր է ճիշտ օգտագործել լեզուն և միայն ամենամյա, ամենօրյա հոգատարությունը կարող է լավ օգտագործման, կատարելագործման ուղիներ գտնել:

- Շատերին է հետաքրքրում, թե Դուք ինչպես եք սովորել մայրենի լեզուն, ովքեր են եղել Ձեր սիրելի ուսուցիչները և այժմ ինչպես եք կատարելագործում Ձեր իմացածը:

- Հայրս այն մարդկանցից էր, որ ուղղակի սիրահարված էր իր լեզվին: Սա շատ մեծ ազդեցություն բողեց մեր ընտանիքի, մեզ վրա, որպեսզի մենք էլ սիրենք մեր լեզուն: Հայրս միաժամանակ ինտերնացիոնալիստ էր, պահպանում էր, որ մենք սովորենք նաև այլ լեզուներ, բայց ամենից լավ տիրապետենք մեր մայրենի լեզվին: Ես հայերենը սովորել եմ իմ հորից, նա է իմ մեջ առա-

ջացրել սեր և հետաքրքրություն մեր լեզվի բարձր արժանիքների նկատմամբ: Բացի այդ, ես ունեցել եմ հայոց լեզվի շատ լավ ուսուցիչ, որին միշտ հիշում եմ, իմ այդ սիրելի ուսուցիչն էր Հայկ Հովակիմյանը: Նա ինձ վրա շատ մեծ տպավորություն է թողել, խոսում էր անաղարտ հայերենով, նա, կարելի է ասել, լեզվի սիրահարներից էր, իր մայրենի լեզուն սիրող, պաշտողներից մեկը: Շատ լավ բան է, երբ մարդ լեզվի սիրահար է կամ լեզվասեր, ինչպես Դուք եք անվանել ձեր ակումբը: Ես էլ եմ շատ սիրում իմ մայրենի լեզուն, հետևաբար, ես էլ եմ լեզվասեր, ուրեմն՝ ձեր ակումբի անդամը:

Կան մարդիկ, որոնք շատ լավ հասկանում են, թե ինչ նշանակություն ունի իրենց ժողովրդի համար մայրենի լեզուն: Նրանք հասկանում են նաև, որ մայրենի լեզվին լավ տիրապետելը հիմք է նաև ուրիշ լեզուների ուսումնասիրության, լավ սովորելու համար: Ես միշտ էլ սիրել եմ կարդալ հայ գրականություն: Դա մեծ դեր է խաղացել մայրենի լեզվի իմացությունն ու կատարելագործելու համար. երբ կարդում ես գեղարվեստական գրականություն, ապա անխուսափելիորեն կատարելագործում ես իմացածդ մայրենի լեզուն: Այժմ էլ հիմնականում կատարելագործելու համար. երբ կարդում ես գեղարվեստական գրականություն, ապա անխուսափելիորեն կատարելագործում ես իմացածդ մայրենի լեզուն: Այժմ էլ հիմնականում այդ ճանապարհով եմ հարստացնում իմ իմացած հայերենը, կարդում եմ հայ գրականություն՝ իհարկե, հատուկ ուշադրություն դարձնելով լեզվական կողմի վրա:

Ինձ համար մայրենի լեզուն առաջին հերթին մեր ժողովրդի խոսելու, մտածելու լեզուն է: Ես այդ ժողովրդի զավակն եմ, հետևաբար, չեմ կարող չսիրել, չպաշտել այդ դարի խորքից մեզ հասած այդ հոգևոր գանձը: Բացի այդ, կա մի ուրիշ բան էլ: Այսպես, երբ ուզում ես մտերմական ձևով արտահայտել թո մտքերն ու զգացմունքները, որոնք վերաբերում են քո անձնական կյանքին, ընտանեկան կյանքին, ապա այդ մտքերն ու զգացմունքներն արտահայտելիս հարկադրված ես միշտ դիմել քո մայրենի լեզվի օգնությանը: Ինչպե՞ս չսիրեն իմ մայրենի լեզուն, երբ կյանքիս դեպքերից խորապես համոզվել եմ, որ մայրենի լեզուն ավելի շատ է կապված զգացմունքների աշխարհի հետ: Մայրենի լեզուն հարազատ հույզերի հարազատ աշխարհ է: Մարդու հոգեկան աշխարհը այնքան սերտորեն է կապված մայրենի լեզվի հետ, որ այդ լեզվով սովորած, զգացածը մոր կաթի նման ներծծվում է նրա էություն մեջ:

- Աշխարհի ամլային մարդկանցից ոմանք, հայ թե օտար, հայերենը համարել են կատարելագործված, հարուստ և ճկուն լեզու: Դուք ի՞նչ կարծիքի եք, ինչպե՞ս եք բացատրում լեզվի հարստությունը, ճկունությունը:

- Ընդհանրապես լեզուն համարում ենք հարուստ, ճկուն այն դեպքում, երբ նրա միջոցով կարողանում ենք ազատորեն արտահայտել ցանկացած գաղափարներ, մտքեր, մասնավաճ՝ ժամանակակից կյանքի, որը շատ հարուստ է գիտության և տեխնիկայի բազմազան երևույթներով ու հասկացություններով: Մեր լեզուն հենց այդպիսին է: Հայոց լեզվի հարստությունն հիմնական պայմանը նաև այն է, որ կարողանում է լավ արտահայտել մարդկային զգացմունքները, դրանց նրբությունները: Գրեցի հայերեն ունի գաղափարներ ու զգացմունքները ճշտությամբ ու խորությամբ արտահայտելու համապատասխան ու նուրբ ձևեր, նույնիսկ բազմաթիվ ձևեր: Սա

մեր լեզվի հարստությունն է: Այլ բան է լեզվի ճկունությունը: Դա այն է, թե տվյալ լեզուն ինչպես է հարմարվում նոր պայմաններին: Մեր լեզուն ոչ միայն շատ ճկուն է, այլև խիստ տրամաբանական է: Օրինակ, մեր թվերի անվանումները. դրանք այնքան պարզ ու հեշտ են կազմված, որ շատ ավելի մատչելի են, քան շատ ու շատ լեզուներում: Օրինակ, տասնմեկ, տասներկու, տասներեք և այլն այնպես են կազմված, որ շատ հեշտ են թվերի գումարման համար: Գերմաներենը, որ նույնպես ճկուն լեզու է, թվականների անունները կազմում է այլ կարգով, քսանից հետո արդեն ուրիշ է, իսկ հայերենում ինչպես տասնմեկ, տասներկու, տասներեք է, այնպես էլ չարունակվում է. քսանմեկ, քսաներկու, քսաներեք և այլն: Ես իմ մասնագիտությունից ելնելով եմ հարցին մտնում, մենք գործ ունենք ճշգրիտ սահմանված գաղափարների հետ:

Ես ուզում եմ նորից վերադառնալ մեր լեզվի հարստությանը վերաբերող հարցին: Ի դեպ, պետք է ասել, որ մեր լեզուն այնքանով է հարուստ, որ հեշտությամբ կարողանամ է զանազան գիտությունների բնագավառների հասկացություններին համար գտնել համապատասխան ձևեր, բառեր ու արտահայտություններ: Գիտական աշխատանքի ընթացքում համոզվել եմ, որ հայերենը շատ ավելի հարուստ լեզու է, քան բազմաթիվ եվրոպական լեզուներ: Կարող եմ օրինակ բերել հենց աստղագիտությունից: Եվրոպական բոլոր լեզուներն ասում են՝ էկլիպտիկա, իսկ հայերը ունեն իրենց սեփական բառը՝ խավարածիր, որն արտահայտի ու հասկանալի է, մատչելի, քան օտար բառը: Կան մի ուրիշ օրինակ, կա էկվատոր, հունարեն բառ է, որը տարածված է բոլոր եվրոպական լեզուներում, իսկ մեր գիտական լեզվում ունենք հասարակած: Տեսնո՞ւմ եք մենք ինչքան հարուստ ենք: Եթե որևէ նրբություն արտահայտելու համար անհրաժեշտ է մի ուրիշ բառ հնարել, մենք արդեն պատրաստ ենք: Լեզվի հարստությունը գիտության բնագավառի, ինչպես նաև այլ բնագավառների համար շատ մեծ նշանակություն ունի, որովհետև այս բարեմասնությամբ հնարավորություն է տալիս մեզ արտահայտել մտքի և զգացմունքի նրբությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով մեր լեզվին հատուկ ոգին:

- Մեզ հետաքրքրում է այսպիսի մի հարց. Դուք շատ եք եղել արտասահմանում, հանդիպումներ եք ունեցել սփյուռքի հայերի հետ: Որպես հաղորդակցման միջոց ո՞ր լեզուն եք ընտրել:

- Այո, ես շատ եմ եղել սփյուռքահայության շրջանում, և բոլոր տեղերում էլ բնականաբար խոսել եմք հայերենով: Ոչ միայն ես, այլև արտասահման գործուղված աստղագետները, օրինակ՝ ընկեր Լյուդվիգ Միրզոյանը: Համադիպումների ժամանակ, ժողովներում միշտ էլ Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտական գործունեության, Բյուրականի աստղադիտարանի հաջողությունների մասին հանդես եմք եկել միայն հայերեն լեզվով: Երբ գիտական հարցերը շարադրել ենք հայերեն, մենք բնավ որևէ պակասություն չենք զգացել, խոսել վստահ, համարձակ, նույնիսկ այդ հանգամանքը մեզ որոշ չափով ոգևորել, ուժ է տվել:

- Ընկեր Համբարձումյան, ասացե՛ք խնդրեմ, ի՞նչ է պահանջվում լեզվի նկատմամբ հոգատար լինելու համար:

ԲԱՆԷ ՄԵՏԱՏ

Ստեփան ԶՈՐՅԱՆ



Վաղուց է ասված, թե դժբախտությունը հնարագետ է դարձնում մարդուն: Եվ դա որքան ճշմարիտ է անհատների համար, նույնքան և ավելի՝ ազգերի համար:

Չորրորդ դարի վերջում ամենադժբախտ և ամենաճանաչվածների մեջ էր Հայոց Աշխարհը: Նա կորցրել էր պետական անկախությունը, հարևան երկու հզոր, հետևաբար գիշատիչ պետությունները՝ Իրանը և Բյուզանդիան, նրան բաժանել էին իրենց միջև: Անկախ երկիրը դարձել էր պարսկական Հայաստան և բյուզանդական Հայաստան: Այդ քիչ էր կարծես, գիշատիչները վասալ Հայաստանի պետությանն ու եկեղեցուն պարտադրում էին ոչ միայն իրենց խորթ օրենքները, այլև իրենց լեզուն: Այս բանում առավել ազդեցիկ էր հայերի ոչ բարով «հավատակցի» քրիստոնյա Բյուզանդիան:

Եվ ահա այդ բռնության մեջ Հայոց Աշխարհի մտածող գլուխները հատուկ եղան, որ երկրի անկախությունը կորցնելուց հետո, այնուամենայնիվ, պետք է մնալ **ինքնուրույն**: Իսկ դրա համար անհրաժեշտ է մի նոր, շատ կարևոր գործոն՝ **սեփական գիր**, որպեսզի դրանով պահեն պահպանեն **հայոց լեզուն** ու հայ ժողովուրդը: Նրանց խթանում էր, անշուշտ, հարևան ազգերի՝ հույների, սիրիացիների և մյուսների օրինակը, թե՛ **չկորչելու համար ժողովրդին պետք է տալ գիր և գիրք իր իսկ լեզվով, որպեսզի նա չդառնա հոգևոր մուրացկան, այլ ապրի արժանա-**

պատվությամբ: Եվ այս գիտակցությունը դառնում է խորին մտահոգություն, դառնում է հրամայական պահանջ: Մեծ խանդով ու եռանդով (այսօր մենք կասե՛ինք՝ անձնավիրությամբ, հայրենասիրությամբ) այդ գործին է նվիրվում ժամանակի լուսավոր ու բանագետ մարդկանցից մեկը՝ Մեսրոպը, որ դարերի մեջ անմահացավ որպես Մեսրոպ Մաշտոց (հմաստուն):

Երկու տարվա անդադրում որոնումներից ու տքնությունից հետո Մեսրոպը իրականացնում է իր և խոհակիցների երազը՝ գտնում-մշակում է հայոց գրերը՝ այբուբենը և բերում հայրենիք:

Թե որքան մեծ է եղել այդ գյուտի նշանակությունը, և որքան խորն են գիտակցել այդ ժամանակի բանիմաց մարդիկ, երևում է 5-րդ դարի մեր պատմիչ, դեպքին ժամանակակից Կորյունի արձանագրած հետևյալ փաստից:

Երբ Մեսրոպի վերադարձի լուրը հասնում է հայոց մայրաքաղաք Վաղարշապատ, Վռանշապուհ թագավորն իր ավագ նախարարներով, Սահակ Պարթև կաթողիկոսն իր եպիսկոպոսներով (անշուշտ, դորձներով ու խաչվառներով) գնում են մինչև Արաքս՝ Մեսրոպին ընդառաջ. «...ողջույններից հետո՝ վերադառնում են ցնծության ձայներով, երգերով, բարձրաձայն օրհնություններով և տոնական ուրախությամբ անց են կացնում օրեր...»:

Այս նկարագիրը շատ բան է ասում 4-րդ դարի հայերի գիտակցության մասին, և առաջին հերթին վկայում է այն, որ նրանք Մեսրոպի գյուտը համարել են հոգևոր ազատության, ինքնության և առաջադիմության ազդակ:

Եվ Մեսրոպի գյուտն իրոք հեղաշրջում է հայ կյանքը, հիմք է դնում լուսավորության ու առաջադիմության և մասնավոր ածրային գործընթացի գիտակցությունը:

Ու Մեսրոպն այսպիսով դառնում է մեր առաջին գիտնականը. նրա ստեղծած տառերը հնչյունային առումով այնքան կատարյալ են, որ մինչև այսօր ռեֆորմի կարիք չեն

զգում, և եղած ռեֆորմները, ընդհակառակը, վնասում են նրան:

Մեսրոպը դառնում է մեր առաջին ուսուցիչը, եթե կուզեք՝ մեր առաջին համալսարանը. բացի այն, որ դպրոցներ է հիմնում Հայաստանի երկու մասում էլ (պարսից և բյուզանդական), անգամ լեռնային Սյունիքում ու շատ տեղեր ուսուցանում է ինքը, այլև պատրաստում է երիտասարդ գիտնական կադրեր և մի քանի հերթ մեծ խմբերով ուղարկում Հունաստան ու այլ երկրներ՝ կատարելագործվելու:

Մեսրոպը նախածեռնում է նաև կարևոր գրքերի թարգմանություն և ինքը թարգմանում է Սողոմոնի առակներից, դառնում է մեր առաջին թարգմանիչը՝ իրեն նշանաբան ընդունելով՝ «Ճանաչել գիմաստություն և գիտաբան, իմանալ զբանս հանճարոյ»:

Եվ այսպիսով, այս անօրինակ եռանդուն հայրենասերը, որ պահպանել էր նախկին գիմվորականի և դիվանագիտի իր ձեռներեց ոգին, իր բազմակողմանի գործունեությամբ դառնում է մեր **մեծագույն լուսավորիչը:**

Նրա մեծագործությունը լրիվ դարձնելու համար պետք է ավելացնել նաև, որ հայոց տառերի գյուտից հետո նա, ըստ Կորյունի, հրավեր է ստանում հարևան երկրներից (Վրաստանից ու Աղվանքից) և նրանց համար նույնպես հորինում է տառեր, հիմնում դպրոցներ՝ ամիսներով մնալով և ուսուցանելով այդ երկրներում, դրսևորելով ազգերի բարեկամության մի բարձր հոգի:

Իսկ Հայոց Աշխարհում նրա հնարած գիրը դառնում է **ինքնապաշտպանության գեներ** ու **վահան**, դառնում է **հայ ժողովրդի հարստև գոյության երաշխիքը**. ապահովում է հայ ժողովրդի **ինքնությունը**, քան այդ կապիտալներ հայկական մի թույլ պետություն՝ առանց ազգային գրի: **Ուրիշ խոսքով՝ այն, ինչ չկարողացան անել հայոց արքաները գեներով, կատարեց համեստ Մեսրոպը՝ իր հրեղեն տառերով:**

Միջնադարի բարբարոսական ավելոծ խավարի մեջ նա լույս փա-

րոս եղավ մեզ համար... **Նա ոչ միայն փրկեց մեր ժողովրդին ողբերգական կործանումից, այլև անմահություն պարգևեց նրան՝ խթանելով նրա կորովը ամենա արժեքներ ստեղծելու համար...**

Ու գիրը դառնում է ամենագոր: Գիրը դառնում է գիրք: Գիրքը՝ ազգապահության գործոն: Գիրն ու գիրքը պահպանում, զարգացնում են լեզուն ու մարդկանց: Եվ կարճ ժամանակում այնքան է խորանում գրի ու գրքի սերը, որ ժողովուրդը, իր երախտագիտական մեծարանքի համար այլ արտահայտություն չգտնելով, մեծագործ հեղինակներին՝ Մեսրոպից սկսած մինչև խորենացի, Եղիշե, Նարեկացի, համարում է սուրբ, ինչպես այսօր մենք իրոք բազմավաստակ գործիչներին տալիս ենք ժողովրդական կոչում: Սահմանվում է անգամ **Թարգմանչաց տոն** (ինչպիսին, որքան գիտեն, չունի և ոչ մի ժողովուրդ), և այդ տոնը յուրաքանչյուր տարի տոնվում է հիմնավոր Օշական գյուղում՝ Մեսրոպի գերեզմանի վրա:

Քաղաքականապես անապահով, բռնի ճնշվելու վտանգին ենթակա ժողովուրդը, ապավինելով իր գրին ու գրքին, կարճ միջոցում կատարում է թռիչքներ՝ թարգմանական ճիշտ գրականության հետ միասին ստեղծում է ինքնուրույն պատմագրություն, գիտություն, ստեղծում է հայրենասիրական գրքեր ու երգեր, որոնք և դարերի մեջ պահեցին մեր պայպերի ինքնության ու ազատության ոգին: Ոչ միայն այս. Մեսրոպի գյուտի շնորհիվ գիրքը դառնում է փրկության փարոս, դառնում է անգնահատելի գանձ և պաշտամունքի առարկա ոչ միայն 5-րդ դարում, այլև դարեր շարունակ:

Եվ այնուհետև մեր կախյալ պետականությունը կորցնելուց հետո հայոց լեզուն ու գիրքը փոխարինում են պետության. մարդիկ հոգեկան մխթարություն ու կորով են ստանում հայ գրքերից... և այդ է պատճառը, որ միջնադարի հայոց գիրքը կանգնում է իր ժառանգների որպես **մեծագույն արժեք**, իսկ բարբարոս ասպատակների հափշտակած հայ

գրքի համար ծախսում է ամեն ինչ՝ այն գերությունից ազատելու: Եթե հայրը չի կարողանում անել այդ, կտակում է որդուն, որ նա իր մահից հետո ծախի ամեն բան, անգամ շարժական և անշարժ կարողությունը և փրկի՝ գիրքը:

Ու այսպես, մեր ժողովրդի դարավոր կուլտուրական մեծ ժառանգությամբ՝ հարուստ ու ճոխ դպրություն, ինքնատիպ ճարտարապետությամբ և գունագեղ նուրբ մանրանկարչությամբ մենք պարտական ենք Օշականի համեստ դամբարանում հանգչող մեր մեծ երախտավորին, մեր անմահ Մեսրոպին:

Եվ թո՛ղ հիշատակը նրա մնա հավիտյան ամենա:

Ու կմնա, քանի ապրում է ու կապրի հայ ժողովուրդը և հայոց լեզուն:

Իսկ հայոց լեզուն ինչպես ապրել է խավար դարերի բարբարոսական բոլոր արհավիրքների մեջ, այնպես էլ և առավել լավ պիտի ապրի այսուհետև՝ մեր նոր պետականության պայմաններում, լուսավոր դարերի լուսավոր ազգերի ընտանիքում, իհարկե՝ ամենքիս գիտակից ջանքերով: **Եվ ոչ մի գիշատիչ ազգ ու պետություն այլևս չի՝ հանդգնի, խավար դարերի օրինակով ձեռք բարձրացնել մեր ժողովրդի սրբության՝ լեզվի վրա, քանզի լեզուն ժողովրդի սիրտն է, լեզուն գիտակցություն է, լեզուն հուր է և սուր:**

Եվ մենք այսօր մեծն Մեսրոպի պայծառ հիշատակը խորապես հարգած կլինենք նրանով, եթե առավել ճիշտացնենք, նրբացնենք ու կատարելագործենք մեր լեզուն, որպեսզի նա ավելի լավ ու ավելի լրիվ արտահայտի մեր ժամանակի մարդու բարդ ապրումները՝ հույզերն ու խոհերը:

Հավերժ փառք մեր անզուգական լուսավորչին:

1962թ.

Ստեփան ԶՈՐՅԱՆ, Երկերի ժողովածու, հատոր տասներկուերորդ, «խորհրդային գրող» հրատարակչություն, 1990թ. Թվայնացումը՝ Լեզվի ժողովրդական տեսչության

- Լեզվի նկատմամբ հոգատար լինելու, լեզվական ունակություններ ձեռք բերելու համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ մարդ կատարելագործի իր գիտելիքները: Դրա համար հարկավոր է ոչ միայն խոսելու և գրելու ժամանակ լավ ընտրություն կատարել, հոգատարությամբ օգտագործել մայրենի լեզուն, այլև այդ լեզվով շատ կարգալ, կարողալ հայ գրականություն, ընտրել լավ լեզվով գրված գործեր և կարողալ լեզվական ճաշակը բարձրացնելու համար: Ուրեմն այսպես, ես գտնում եմ, որ մեր կողմից գործածվող լեզվի կատարելագործման ամենակարևոր պայմանը գեղարվեստական գրականություն կարողալն է:

Լեզվի նկատմամբ հոգատար լինելու կարևոր պայմաններից մեկն էլ այն է, որ մարդիկ պետք է իրար սովորեցնեն, օգնեն, զգուշացնեն, թե ինչպես պետք է ճիշտ խոսել: Ես էլ խոսելիս թերություններ ունեմ, վրիպումներ եմ թույլ տալիս իմ շարադրանքի մեջ, գուցե և Դուք էլ ունեք, բայց երբ ունենք շատ սխալներ և լեզվի համար վտանգավոր սխալներ, ապա այդ դեպքում կարելի է և պետք է միջամտել, ուղղել և վերացնել: Ես հիշում եմ, թե ինչպես էր հայրս միջամտում, կանխում լեզվական սխալները և դրանով լեզվի նկատմամբ հոգատար լինելու լավ օրինակ էր ցույց տալիս: Նա միշտ,

երբ լսում էր, որ մեզանից որևէ մեկը լեզվական սխալ է անում, իսկույն միջամտում էր, ուղղում, բացատրում ու երբեմն էլ զայրանում էր: Ուղղելուց հետո նա ջանում էր համոզել փաստերով, ցույց էր տալիս, որ իր ուղղումը նրա համար է, որ միտքը ճիշտ արտահայտվի, և մայրենի լեզուն չաղավաղվի: Ես այդ ժամանակ սովորեցի, թե ինչպիսի ուժեղ և միևնույն ժամանակ նուրբ կապ կա մտքի և նրա արտահայտության միջև: Երբ այս կամ այն բանը, արտահայտությունը ճիշտ, տեղին չի գործածվում, տուժում է և՛ լեզուն, և՛ միտքը: Ուրեմն լեզվի նկատմամբ հոգատար լինելու համար շատ կարևոր է նաև մտքի և արտահայտության կապի ներդաշնակումը, պահպանումը:

- **Մեզ հայտնի է, որ Դուք այս կամ այն առիթով կատարում եք լեզվական ուղղումներ, դիտողություններ եք անում ուրիշներին թույլ տված սխալների համար: Կարո՞ղ եք մի քանիսը հիշել և բացատրել Ձեր նկատառումները:**

- Օրինակները շատ են, բայց ես կցանկանայի խոսել միայն մեկի մասին: Ասում եմ՝ **գիտական քարտուղար և գիտնական քարտուղար:** Ես միշտ դեմ եմ եղել երկրորդին: Շատ է տարածված այս ձևը: Այո, մենք լեզվական կոպիտ սխալ ենք թույլ տալիս, երբ գիտական քարտուղարին ասում ենք գիտնական քարտու-

ղար: Ինչո՞ւ ենք այդպես ասում, որովհետև չենք թափանցում արտահայտության, դարձվածքի էության մեջ, բառացի թարգմանում ենք և չենք նայում խնդրի էությանը: Գիտական քարտուղարն այն մարդն է, որը զբաղվում է հիմնարկի գիտական գործերով, գիտական հարցերի քարտուղարությամբ: Ուրեմն նա գիտական քարտուղար է, իսկ թե նա միաժամանակ պետք է լինի գիտական աշխատող, դա արդեն ինքնուրույն հասկանալի է: Գիտական քարտուղարը տարբերվում է մյուս քարտուղարներից նրանով, որ նա գիտական հարցերով է քարտուղար և ոչ թե քարտուղար՝ գործուղումներ ստորագրելու կամ, ասենք, այցելուներ գրանցելու, պետին զեկուցելու համար: Պետք է այստեղ նկատել նաև այն, որ հենց **գիտնական** բառն ենք հաճախ շռայլում, տեղին չենք գործածում, ես կասեի՝ նույնիսկ սխալ ենք գործածում: «Մենք՝ գիտնականներ...», «գիտնականների ժողով», «երիտասարդ գիտնականները...» և այլն, այսպես շռայլորեն ենք գործածում այդ բառը՝ առանց խորանալու նրա բուն էության, իմաստի մեջ: Գիտնականների թիվը կարելի է մատների վրա հաշվել, մինչդեռ գիտության բնագավառի ամեն մի աշխատող իրեն գիտնական է կարծում: Դիսքուտացիան պաշտպանելուց անմիջապես հետո երիտասարդն արդեն իրեն անվա-

նում է գիտնական: Ես շատ եմ խոսել **գիտնական** բառի նման գործածությունների մասին և դիտողությունը շատ եմ արել, սակայն արդյունքը չեմ տեսնում:

- **Ինչպիսի՞ լեզվական աղավաղումներ են Ձեզ ավելի մտահոգում, գուցե և զայրացնում: Ի՞նչ տպավորություն են թողնում այն անձինք, որոնք լավ չտիրապետելով մայրենի լեզվին և ոչ էլ այլ լեզուների, խոսում, գրում են խառնուրդով: Ինչպե՞ս կարելի է պայքարել լեզվախառնուրդով խոսողների ու մտածողների լեզվամշակույթը բարձրացնելու համար:**

- Ինձ թվում է, որ բոլոր լեզվական աղավաղումներն էլ պետք է մեզ բոլորիս մտահոգեն: Այո, կարելի է նույնիսկ զայրանալ: Լեզվական խառնուրդով խոսողները մեզ ոչ միայն զայրացնում, այլև ծիծաղեցնում են: Ես հաճախ եմ հանդիպել նման դեպքերի: Լեզվական այս տիպի աղավաղումը ինձ այնքանով է մտահոգել, որ տեղն ու տեղը ուղղել եմ: Խոսակցության մեջ տարբեր լեզուների բառեր, արտահայտություններ գործածելը մայրենի լեզվին վնասում է: Բացի այդ, լեզվական խառնուրդը փաստորեն զրկում է մեր խոսքը տրամաբանական հստակությունից:

Հետևաբար, այն մարդը, որը խոսում է երկու լեզուները խառնելով, մտածում է ինչ-որ ձևով ինֆորմա-

ցիա հաղորդելու մասին, իսկ թե իր հաղորդածն ինչ տրամաբանական ձև է ստանում, նրան չի հետաքրքրում: Ինձ համար սկզբունքային տարբերություն չկա բանավոր խոսքի և գրավորի միջև: Ես շատ եմ հանդիպել խառնուրդով խոսող և գրող մարդկանց, որոնք խախտում են երկու լեզվի ներքին տրամաբանությունը և երբեմն էլ այն աստիճանի են աղավաղում, որ թուլացնում են այդ լեզուների կառուցվածքային դրվածքը՝ իրենց խոսքը զրկելով ամբողջականությունից ու ներքին ներդաշնակությունից:

- **Մեզ հետաքրքրում է, թե Դուք ինչ նկատառումով եք ձեր թոռնիկի համար ընտրել Ուլուկ ամուկը:**

- Ուլուկ ամուկը ես գտա Խաչիկ Դաշտենցի «խողովան» վեպում: Երբ կարդացի վեպը, գեղեկուհու այդ անունը ինձ դուր եկավ: Իմ մեջ ցանկություն առաջացավ ստուգել, թե որտեղից է առնված այդ անունը: Հանդիպեցի հեղինակի հետ: Հետաքրքրվեցի՝ ի՞նչն է հնարել Ուլուկը ամուկը, թե կյանքից է առնված: Դաշտենցը բացատրեց, որ այդ անունն ամենևին էլ հնարովի չէ, այլ շատ է տարածված եղել Սշո դաշտում, զուտ հայկական է: Ես ուրախացա, որ ճիշտ է եղել իմ զգացումը:

ՆԵՏԱԳԻԾ

ՎՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՆԱՀԱՏԱԿԻՆ

Փետրվարի 5-ին Մարտունու շրջանի Գիշի գյուղում տեղի ունեցավ հուշ-ցերեկույթ՝ նվիրված Արցախյան ազատամարտի հերոս Սերժիկ Շամամյանի (Մանչո) ծննդյան 65-րդ տարեդարձին:

Ներկա էին պետական եւ զինվորական բարձրաստիճան այրեր, հերոսի հարազատները, մարտական ընկերներ:

Միջոցառումն ապրողների կողմից Ազատամարտի հերոսի հիշատակի խնկարկում էր: Արցախյան զոյամարտում իր կյանքը հայրենիքի պաշտպանությանը զոհաբերած Գիշի գյուղի նվիրյալներից Սերժիկ Շամամյանը՝ Մանչոն, զոհվել է հիվանդ աղջկա դեղերը գրայանում՝ այդպես էլ տուն չհասնելով:

Մարտունու և զորամասի ԱՀԱ գծով հրամանատարի տեղակալ՝ փոխգնդապետ Սիեր Սարգսյանն իր խոսքում նշեց, որ Սերժիկ Շամամյանը այն քաջորդիներից էր, ով առաջնային պլան էր մղում հայրենիքի պաշտպանությունը եւ «Մահ իմացյալ՝ անմահություն է» գիտակցումով նետվեց պայքարի: «Այս երկիրը բառերով սիրվող երկիր չէ, նաեւ հեռադիտակով դիտվող երկիր չէ: Քարի հետեւում քար կա, մշուշի հետեւում՝ մշուշ: Այս երկրի սահմանները գծվում են արյամբ եւ ամրանում քրտինքով: Այս երկիրը համընդհանուր սիրո երկիր է... Օրենքներն այստեղ ծնվում են

սահմաններում անհրաժեշտաբար: Պատմությունը ցույց է տվել, որ ժողովուրդների հիշողության մեջ մնում են այն մարդիկ, ովքեր ընտրում են անանձնական սիրո ճանապարհը»,- սպարապետ Վազգեն Սարգսյանի նկարագրած նման անձանց շարքերում էր Սերժիկ Շամամյանը»,- ասաց նա:



Ինչպես ներկայացրեց մարտական ընկեր Սիեր Բալայանը, միասին մեծ ճանապարհ են անցել, դիմակայել բազում դժվարությունների: «Այսօր աչք ենք քարթում եւ հետ մայրում. մեր առջեւ խորխտ քայլվածքով տղաներն են, որոնց մեջ՝ Մանչոն: Անհանգիստ բնավորություն ուներ, միշտ շտապում էր, հասնում ընկերներին»:

Գիշու միջնակարգ դպրոցի տնօրեն Արկադի Ավանեսյանն ասաց, որ Արցախյան շարժումը նոր էջ է՝ ուղղված պատմական արդարության վերականգնմանը: «Մարտի դաշտ է մեկնել շուրջ 300 գիշեցի, որոնք ընդգրկվել են տարբեր ստորաբաժանումներում՝ իրենց սրբազան ներդրումն ունենալով հաղթանակի կերտման գործում: Բնավորությամբ բարի, ընկերասեր ու աշխատասեր Սերժիկ Շամամյանն առաջիններից էր, որը զինված պայքարի միջոցով կարողացավ իրագործել մեր երազանքները: Մենք պարտավոր ենք ճիշտ ապրել ու շարունակել նրանց կիսատ թողած գործը»,- հավելեց նա:

Յերոսի դուստր Վիկտորյա Քասպարյանը 10 տարեկան էր, երբ զոհվեց հայրը: Անսահման սիրում էր հորը եւ շատ կապված էր նրան: «Նա միշտ ասում էր՝ ջուրն ով շուտ բերի, նա էլ իմ բալիկը: Ես միշտ առաջինն էի վազում ջուր բերելու»,- ասաց նա՝ շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին, մարտական ընկերներին, ՊԲ ներկայացուցիչներին, մարթելով ուժ եւ կորով:

Հուշ-ցերեկույթին զեղարվեստական կատարումներով հանդես եկան Գիշու միջնակարգ դպրոցի աշակերտներն ու ՊԲ «Ասպետ» համույթը:

...ԵՎ ԻՆՏԵՆԵԿՏՈՒԱԼ ԽԱՂ



Առաջնակարգ տեղեր են գրավել Վազգենաշենի «Արաբո», Մարտունու և զորամասի «Արիս» թիմերը: Հաղթող թիմերը պարգևատրվել են պատվոգրերով եւ խորհրդանշական նվերներով:

ՀՀ Արցախի պատանեկան միության վարչության նախաձեռնությամբ Մարտունու շրջանի Գիշու միջնակարգ դպրոցում կազմակերպվեց «Պիտի գնանք վաղ թե ուշ» խորագրով ինտելեկտուալ խաղ՝ նվիրված Արցախյան ազատամարտի հերոս Սերժիկ Շամամյանի ծննդյան 65-րդ տարեդարձին:

Խաղի նպատակն էր ամրապնդել բանակ-հասարակություն կապը: Ինտելեկտուալ խաղին մասնակցում էին Գիշու, Վազգենաշենի, Աշանի միջնակարգ դպրոցները ներկայացնող աշակերտները, Մարտունու և զորամասը ներկայացնող ջոթ խմբեր:

Աղբյուր եւ համառ մրցապայքարում հաղթող է ճանաչվել Մարտունու և զորամասը ներկայացնող «Հարսանիք լեռներում» թիմը: Թիմի ավագ Տիգրան Զաքարյանի խոսքով՝ զեղեցիկ միջոցառման է ականատես եղել եւ մասնակցել: «Շատ եմ տպավորվել խաղից: Ուրախ եմ, որ կարողացանք զարգացնել մեր գիտելիքները: Ծնորակալություն եմ հայտնում կազմակերպիչներին եւ հուսով եմ, որ մեզան միջոցառումները շարունակական կլինեն»:

Աղբյուր եւ համառ մրցապայքարում հաղթող է ճանաչվել Մարտունու և զորամասը ներկայացնող «Հարսանիք լեռներում» թիմը: Թիմի ավագ Տիգրան Զաքարյանի խոսքով՝ զեղեցիկ միջոցառման է ականատես եղել եւ մասնակցել: «Շատ եմ տպավորվել խաղից: Ուրախ եմ, որ կարողացանք զարգացնել մեր գիտելիքները: Ծնորակալություն եմ հայտնում կազմակերպիչներին եւ հուսով եմ, որ մեզան միջոցառումները շարունակական կլինեն»:

Հասմիկ ՀԱԿՈՒՅԱՆ

Արցախի պետական համալսարան

թուփ, շահ նուր ևն (հեղինակն ամենայն ուշադրությամբ մանրամասնել, քրտնաջանորեն փաստարկել է յուրաքանչյուր կառույց, լրջորեն կապակցել, համադրել, հակադրել յուրաքանչյուր օրինակ):

ՇԵԼԼԻ, ԲԱԳԲԱՆԼԱՐ, ԽՈՒՂՈՒՐԼՈՒ, ԶԻՆԼԻ, ԿՈՒՎԵՆՆԻ, ՄԻՐԱՇԵԼԼԻ անունների ստուգաբանությունը (էջ 57)-Աղղղամ-Ակնայի շրջակայքում եղած, եղող այս տեղամասերն ամենայն ուշադրությամբ քննված են մեծ հեղինակի կողմից, բայց, ցավոք, առանձին վերնագրերով չեն: *Շելլի-ն Շենիկ-ի* աղավաղումն է (Ուխտածոր): Խաչենագետի ակին գտնվող Ջինլի-ն (Արմենակավան) անունը ուշադրությունից (թե տպագրական վրիպակ, որը բնական է այսքան ծավալուն և անուններով առատ աշխատանքում), դուրս է մնացել մեկնությունից: Բագբանլարը *Բագ* բնակավայր է նշանակել (Բաղմանլար ձևով էր 1823 թ. կոչվել): *Խուղուր-լուն խոտոր* ռուսական բառի աղավաղումն է: Միրաշելլի-ն Մարաշենի աղավաղումն է (Մարտունու Միրաշեն՝ արևի կից՝ արեգոդն, շեն: Մարի/Ամարի շեն): *Կարվենդ-ը* բխեցվել է *Քար բնակավայր* հասկացությունից:

ԿՈՒՎԵՆՆԻ (Մեծ/ Փոքր Կողմանք)/ Փիր Փայա (Մուրբ Գոմեր. Մեծը Ս. Սարգսյանը համարել է *Մաս*)-Մոռվի ժայռերից հետո՝ մինչև Գյարաբի՝ Պղտորագետի գետեզրը, Մեծ ու Փոքր Կվենդերի էին ու են ասում չափարցիները՝ Կուեն/ Կուան/ք-Կուենք՝ *լեռնային տարածք* (այդպես է նաև Աղուան/քը>Աղուեն>Ակուեն մեկնաբանել հեղինակը): Բ. Կարապետյանի մեկնությունը, կապված գոմերի հետ, անընդունելի է (նաև *Փր Փայա* անվամբ են հիշել թուրքերը, չափարցիները՝ *սուրբ գոմեր*): Դա նաև Մեծ սրբատեղի է, բժշկական վայր ու հարուստ մեծ գերեզմանոցաբարերով (ըստ էության իշխանամիստ է եղել, ու

նաև զբաղվել են մետաղ մշակելով, հատկապես իբր գենք են արտադրել՝ միզակի մետաղե ծայրը, սուր, դաշույն ու տարբեր չափի դանակներ ևն): Մոռվի ստորոտի՝ Պղտորագետի ծախափնյա առաջին հովիտն է դա, Իմ. Գյառավանդի՝ Քարավանդի՝ Քարաշենի ու Աղղղաբանի՝ Ուղղղաբանի՝ Քարազարակի/ Կողթազարակի (քար բարձունքի) միջև, մեծատարածք իջվածք է Մոռվի անմիջական զոգահովտի լանջից: Այն մեծ հովտով իջվածք տեղանք է (ժողովրդական մտածողությամբ՝ բժշկական արքյուրով հայտնի տեղ է, օգտվել և օգտվում են առ այսօր. այդ ջուրը իբր մաքրում է երկվամներում եղած նստվածքները-Ս.Ս.):

ՉԱՓՈՐ (էջ 124)-Ս. Սարգսյանը, *Չափար* բառն արաբական համարելով, տվել է իմաստաբանական բացատրություն՝ *հզոր, մեծազոր, սիսվոր*, ու հավելել մեր ժողովրդական հանրահայտ ստուգաբանությունը: Այնուհետև վերականգնել է արաբական ջաբառի հայկական ձևը՝ հնամենի *բագառ-ը՝ լեռնային բարձունքի սրբավայր* (դա հենց Հակառակաբերդն է. այնուհետև հազարամյակների ընթացքում ձևավորվել են դեպի մերթև իջնող սրբատեղիները՝ ներառյալ գյուղը. բերդից իջնող արևահայաց կողմում թեթև ձորակի կողմերի բարձունքների հարթակում երկու մեծ սրբատեղիներ կան (հին ժամանակներում օղային հակիրճ լուր հաղորդելու միջոցներ էին՝ ս. Մինաս/ Մինաս ճգնավորի սրբատեղին, ս. Պողոս/ Պողոս ճգնավորի սրբատեղին,

առ այսօր էլ հատուկ տեղ կա, որտեղից կարելի հանգիստ խոսել վերից վար, ես ամենաք ընկալած եմ ս. Պողոսից-Ս. Ս.): *Ուսաջը* (այրմ-քուրդ աղբյուրանցից այս անվանն էին ուշադրություն դարձրել ու համարել իրենցը (ես իմ *Չափար* գրքում հրաժարվել էի այդ անվան գործածությունից, լեզվաբան լինելով, չհամարձակվելով այդպիսի խիզախ մեկնության, ինչպիսին Ս. Սարգսյանն է իրացրել): Այդ անունը հեղինակը ստուգաբանել է հետևյալ կերպ՝ առաջին բաղադրիչը *կաս-ն* է (*սուրբ, զոհ, պաշտամունք* ևն՝ ուշա>հուշ->ա>հաշա)+այրը (ջուր>ջը):

ՄԱՊԱԹԱՇԵՆ-Նախկինում Ալամանց գոմեր են կոչել: Գեներալ Մադաթովի ծննդավայրն է (Մադաթով Վալերիան Գրիգորի, 1782-1829, անունը՝ Վալերի, լատիներեն՝ *ամուր, ուժեղ*. մանուկ հասակում համագյուղացիները նրան Ռոստոմ են կոչել (պախլավերեն՝ *ուժգին հեղեղ*), հայրանունը՝ Գրիգորի՝ հունարեն՝ զոգոն, արթուն, հսկող): Ըստ Մակար Բարխուտարյանցի՝ բանաստեղծ, գուսան/ աշուղ Սեյադ անունով հիշված (հանրագիտարանում այդ անվամբ են նշել-Ս.Ս.) Պետրոս Մադաթյանցի (1810-1884) ազգանունից է սերվել: Նա ռուսական բանակում սպա է եղել, ապրել է նաև Շամախիում (Պետրոս՝ հունարեն *վեմ, քար*, Մադաթ՝ երբայերեն՝ *պարզ*, արաբերեն՝ *օգնություն*, հայրանունը՝ Տեր-Յովսեփ): Մադաթյանցից գյուղի անունը կապում են միայն գեներալ Վալերի-Ռոստոմի ազգանվան հետ ու նրան են միայն

87 տարեկանում կյանքից հեռացավ փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԱրՊՀ պրոֆեսոր Շահեն Միքայելի Աբրահամյանը: Շահեն Միքայելի Աբրահամյանը ծնվել է 1933թ. հունվարի 22-ին ԼՂՀ Շուշի շրջանի Քարին տակ գյուղում: Ավարտելով տեղի 7-ամյա դպրոցը և Շուշի մանկավարժական ուսումնարանը՝ 1952թ. ընդունվել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտը, որն ավարտելուց հետո աշխատանքի է անցել ծննդավայրի դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1959-74 թթ. աշխատել է կոմերիտական և կուսակցական մարմիններում: 1969-1970 թթ. զբաղեցրել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենի պաշտոնը: 1974թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1969 թվականից առայսօր աշխատել է Արցախի մայր բուհում որպես փիլիսոփայության դասախոս՝ տարբեր տարիների զբաղեցնելով նաև ամբիոնի վարիչի և պատմաբանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնները: 1994թ. նրան շնորհվել է դոցենտի, 2006թ.՝ ԱրՊՀ պրոֆեսորի կոչում: Շահեն Միքայելի Աբրահամյանը գիտության ոլորտում ունեցած նվաճումների համար արժանացել է մի շարք պետական պարգևների՝ պարգևատրվելով «Մետրոպ Մաշտոց» շքանշանով, ԼՂՀ վարչապետի հուշանդամով, ԱրՊՀ «Ոսկե մեդալ»-ով: Հեղինակել է տասնյակ գիտական և հրապարակախոսական աշխատանքներ: Շահեն Աբրահամյանն իր գործունեության բոլոր բնագավառներում աչքի է ընկել որպես բարեխիղճ, պատասխանատու, սկզբունքային, հայրենասեր քաղաքացի և մտավորական՝ վայելելով իր գործընկերների, ուսանողների, համերկրացիների սերն ու հարգանքը: Արցախի պետական համալսարանի ողջ անձնակազմը խոր վշտով սգում է սիրելի գործընկերոջ մահը և իր զորակցությունը հայտնում նրա հարազատներից: Շահեն Աբրահամյանի հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:



Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ Բ.Գ.Թ.

հիշում: Այսպիսով՝ Ս. Սարգսյանի նոր հրատարակած արցախյան տեղանունների ծագումնաբանությանը նվիրված «Արցախյան բնակավայրեր» մեծարժեք աշխատությունը լուրջ ներդրում է հայ լեզվաբանական, պատմագիտական, աշխարհագրական գիտությունների բնագավառում, համարձակ քայլ հազարամյակներ առաջ մարդկության գործածած որոշ բառերի պատմական ստուգաբանության վերաբերյալ, որոնք երկու ուղղությամբ են իրացվել՝ 1. եղած անունների ճշգրտում և ստուգաբանություն, 2. եղած անունների սկզբնականի վերականգնում ու ստուգաբանություն:

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ Բ.Գ.Թ.

ԴԻՄԱՆԿԱՐ

ՀԱՄԵՍ, ԱՋՆԻՎ, ԱՌԱՔԻՆԻ...



Ի՞նչ երանություն, որ այս տողերը գրելու իրավունք ունեցա, քանզի այն իսկական հայ կնոջ մասին է, որն իր ողջ կյանքում ապրում է որպես նվիրված մայր ու կին, որպես հավատարիմ ընկեր և հայրենասեր մարդ: Նա սիրում է մաքուրը, պարկեշտությունը, ավանդականը, և ընտանիքի բարեկեցությունն ու ամրությունը միշտ էլ ամենաառաջնահերթն է համարում իր կյանքում:

Լյուդմիլա Գրիգորյան: Ծնվել է 1950թ. փետրվարի 3-ին Ասկերանի շրջանի Շոշ գյուղում՝ մանկավարժների ընտանիքում:

1967թ. տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևան և նախապատրաստական դասընթացների մասնակցել Բաֆու անվան դպրոցում: Ապա ընդունվել է Երևանի հաշվառու Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Կենսաբանություն և քիմիա» ֆակուլտետը և 1973թ. ավարտել այն:

Ուսանողական տարիներին ծանոթացել է համերկացի, ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող Ալյոշա Գաբրիելյանի հետ: Երկու երիտասարդների մեջ ծնվել է մի գեղեցիկ զգացմունք, որը, ինչպես իրենք են այսօր ասում, հավիտյան դրոշմվել է իրենց սրտե-

րում՝ հավատարմության, սիրո մի անխախտ որոշմամբ:

1973-ի ամռանը Լյուդմիլա Գրիգորյանն ամուսնանում և ընտանիք է կազմում Ալյոշա Գաբրիելյանի հետ: Նորաստեղծ ընտանիքը վերադառնում է հարազատ բնօրրան, քանզի հայրենասիրության վեհ գաղափարներով տոգորված գույզը մտածում էր ստեղծել ու արարել միայն հարազատ բնակավայրում:

Նույն թվականին ամուսիններով աշխատանքի են անցնում Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի միջնակարգ դպրոցում, որտեղ Լյուդմիլա Գրիգորյանը դասավանդում էր քիմիա և կենսաբանություն: Նա կարողանում է ամբիջապես վայելել խրամորթցիների սերն ու հարգանքը և իր նուրբ վարվելակերպով, հաճելի արտաքինով և, իհարկե, գործի իմացությամբ աչքի է ընկնում դպրոցում: Մանկավարժների ընտանիքում ծնված և դաստիարակված երիտասարդ ուսուցչուհու մեջ ակնառու էին իսկական մանկավարժի բոլոր տվյալները: Նա լավ գիտեր, որ դպրոցն արվեստանոց է, որտեղ ձևավորվում է աճող սերնդի միտքը, և հարկավոր է այն ամուր պահել, որպեսզի բաց չթողնվի երեխայի ապագան: Աշակերտներին ուսուցանում և դաստիարակում էր՝ զուգակցելով իր բարոյական անաղարտությունը, հոգեկան հարստությունը:

1982-1985 թթ. Լյուդմիլա Գրիգորյանն աշխատել է շրջանի գրքասերների միությունում որպես պատասխանատու քարտուղար: Այնուհետև տեղափոխվել է Ասկերանի կուսընթացի և նշանակվել կազմակերպական բաժնի հրահանգիչ՝ միաժամանակ դասավանդելով Ասկերանի հեռակա միջնակարգ դպրոցում:

1985-ին որպես մեթոդիստ աշխատանքի է անցել Ասկերանի շրջժողովրդաբաժնում: Մանկավարժական փորձն ու կարողությունները, մասնագիտական պատրաստվածությունը և

աշակերտների հանդեպ անմնացորդ սերն ու նվիրումն օգնել են նրան հետագայում Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում դասավանդելու, որտեղ նա աշխատանքի է մտել Արցախյան պատերազմից հետո և աշխատել մինչև 2011 թվականը: Սիրված ուսուցչուհին կարողացել է աշակերտների մեջ ձևավորել նաև մարդկային բարձր արժեքներ, սովորեցրել նրանց սիրել ու գնահատել գեղեցիկը: Նրա մայրական գործվածքը, որով միշտ շրջապատում էր իր սաներին, օգնել է, որ անկեղծ և մաքուր լինեն ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները:

Լյուդմիլա Գրիգորյանի 70-ամյա տարեդարձը հաճելի առիթ էր հյուրընկալվել նրա օջախում, զգալ ավանդական ընտանիքի ջերմությունն ու երբեք չմարող սերը:

Գաբրիելյանների համերաշխ գերդաստանը հավաքվել էր սեղանի շուրջը, որի վրա ընտանեկան ալբոմն էր, իսկ այն այնքան խոսում ու հետաքրքիր էր... 30-ամյա Լյուդմիլան 47-ը նա այս օջախի նվիրված և օրհնակելի հարսն է: Ինչպես մեզ պատմեց նրա ամուսինը՝ Ալյոշա Գաբրիելյանը, Լյուդմիլան անմիջապես մերժել է Գաբրիելյանների օջախին, ընդունել բոլոր ավանդույթները, իսկ դրանցից ամենակարևորը հյուրասիրությունը, բարեկամասիրությունն ու մարդամոտությունն են: Օջախի հարսը միշտ առաջնորդվել է ամուսնու մոր՝ Թամարա մայրիկի խորհրդով. «Տան գարդարանքն այնտեղ այցելող բարեկամներն են»:

Անհերքելի է նաև, որ հոգատար մայրը մայրություն էր անում ոչ միայն իր զավակներին: Նրա ջերմությունն ու սերն այնքան շատ են, որ բաժին են հասնում իր որդիների ընկերներին նաև: Նրա բարի խորհուրդները, սրտացավ վերաբերմունքը քանի՜ քանի երիտասարդների են օգնել կյանքում գտնել իրենց իսկական տեղը:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, և ոտքի ելավ ողջ արցախահայությունը, Լյուդմիլա Գրիգորյանն ամեն ինչով հենապաշտ էր իր ամուսնուն, որը Շարժման ակտիվիստներից էր: Միշտ լինելով նրա գաղափարակիցը՝ նրա հետ կիսում էր ցանկացած դժվարություն և խնդիր, ուրախանում հաջողություններով:

Պատերազմի տարիներին ընտանիքի ողջ հոգսն անտրտունջ իր վրա վերցրեց տիկին Լյուդմիլան, քանի որ ամուսինն ու ավագ որդին գտնվում էին Ասկերանում, իսկ ինքը երկու զավակների և ամուսնու տարեց ծնողների հետ հայրական Շոշ գյուղում էր: Այդ ընթացքում Ալյոշա Գաբրիելյանը, որպես շրջանի լիազոր ներկայացուցիչ, գտնվում էր Ասկերանում և ամիսներով կտրված էր ընտանիքից...

«Ծանր տարիներ էին, ամեն օր վատ լուրեր էինք լսում և ցավում յուրաքանչյուր զոհի համար: Երբ լսեցինք, որ ինքնաթիռից ընթացող լուրջ և լրիվությամբ այրվել է մեր տունը, շատ վատացանք: Առանձնապես դժվար էր ամուսնու ծնողների համար, բայց հետո կարողացանք հաղթահարել այդ դժվարությունը և նոր տուն կառուցել, քանզի այդպիսին է հայի ճակատագիրը:

Իհարկե, ինչպես բոլոր արցախցիները, դժվարությամբ անցանք հետպատերազմյան տարիները, վերստին ստեղծեցինք, սերունդներ դաստիարակեցինք, որոնցով միայն հպարտանալ կարող ենք այսօր», - ասում է հոբելյարը:

Լյուդմիլա Գրիգորյանն առանձին հպարտությամբ խոսեց իր զավակների, հարսների ու թոռների մասին: Նա մեծ գոհունակություն հայտնեց հարսներից և օրհնեց նրանց եկած ճանապարհը՝ ասելով, որ իրենց բարի և ավանդական ընտանիքի արժանի հարսեր են նրանք:

Մեր ամուսնական գրույցին մասնակցում էին նաև ընտանիքի անդամները, կիսվում հիշողություններով,

խոսում ապագայի մասին: Մեր այն հարցին, թե որն է ընտանիքի երջանկության գրավականը, Լյուդմիլա Գրիգորյանը պատասխանեց. «Կյանքի ընկերոջ ճիշտ ընտրությունը»:

30-ամյա, անգն աչքով էլ երևում էր, որ այս ընտանիքում մեծ երջանկություն և ներդաշնակություն կա: 30-ամյա անթաքույց ջերմությամբ հիշում է, որ երիտասարդ տարիներին կարողացավ ճիշտ ընտրություն կատարել և փոխադարձ հարգանքի ու սիրո վրա ընտանիք կառուցել:

- Իհարկե, ամենակարևորն այսօր խաղաղությունն է Արցախ աշխարհի համար: Ես ցանկանում եմ, որ մեր երկրները միշտ կապույտ լինի, խաղաղություն ավետող աղավաղները ճախրեն երկնակամարում: Թող մեր երիտասարդները երջանիկ ընտանիքներ կազմեն, ավելի հզորացնեն մեր երկիրը, քանզի ամուր է այն ազգը, որն ունի ամուր ընտանիքներ: Երիտասարդ սերնդին պատգամում եմ ապրել ազնվորեն, պատվով և լինել համբերատար, քանի որ բազում դժվարություններով լեցուն է այս կյանքը, - ասում է հոբելյարը:

Մեր մտերմիկ և անմիջական գրույցի ընթացքում Լյուդմիլա Գրիգորյանի հետ խոսեցինք մարդկային տարբեր արժեքների, բնավորությունների, երեխաների ճիշտ դաստիարակության ու նրանց կայացման մասին և համդիպումն ավարտեցինք՝ հիշելով Պրիշվինի հայտնի խոսքը. «Մեծագույն երջանկություն է թեզ չհամարել առանձնահատուկ, այլ լինել այնպես, ինչպես բոլոր մարդիկ են»:

Դե ինչ, շնորհավորենք հիրավի առանձնահատուկ կնոջ 70-ամյա տարեդարձը և գնահատենք այն, որ նա իրեն երբևէ չի տարբերել ոչ ոքից, պարզապես ապրել ու ապրում է՝ ինչպես բոլոր մարդիկ:

Կարինե ԲԱՆՇԻՅԱՆ

ՆՊԱՏԱԿԸ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՆԵՂ ԴԱՐՁՆԵՆ Է

Գյուղական համայնքների կարևոր խնդիրներից է մանկապարտեզ ունենալը: Աշանը Մարտունու շրջանի այն քիչ համայնքներից է, որ ունի մանկապարտեզ: Ինչպես ասաց նախակրթարանի տնօրեն Գայանե Գովհաննիսյանը, գյուղում մանկապարտեզը գործում է 2000 թվականից, ընդ որում՝ Դավիթ Իշխանյանի նախաձեռնությամբ և բարերարների միջոցով. «Քանի որ Արցախում արդեն գործում էր 300-ի մանկապարտեզների հաջողված ծրագիրը, ուստի մենք 2004թ. դիմեցինք նրանց, և Աշանի մանկապարտեզը դարձավ 300-ի «Սոսե» մանկապարտեզներից մեկը»: 2004թ. մանկապարտեզը հաճախում էր 45 սանիկ, գործում էր 2 խումբ, աշխատում 7 հոգի: Այս ուսումնական տարում մանկապարտեզը հաճախում է 30 նախապրոցահասակ երեխա, գործում է մեկ խառը խումբ: Մանկապարտեզը հաճախում են ոչ միայն Աշանի, այլև հարակից գյուղերի նախապրոցահասակ երեխաները:

Կրթական համակարգի առաջնային օղակը նախապրոցական կրթությունն է, որի նպատակն է բարելավել 3-6 տարեկան երեխաների ծանաչողական, ֆիզիկական և սոցիալական զարգացումը, ապահովել նրանց սահուն անցումը դպրոց: Գ.Գովհաննիսյանը, կարևորելով մանկապարտեզի դերակատարությունը, ընդգծում է, որ Աշանի նման փոքր գյուղում մանկապարտեզ ունենալն ինքնին մեծ հաջողություն է: «Սոսե» մանկապարտեզը չնայած ֆինանսավորվում է 300-ի կողմից, բայց ոչնչով չի զիջում պետական



չափորոշիչներով առաջնորդվող մանկապարտեզներին: Իր գործունեության ընթացքում Արևմտյան Ամերիկայի 300-ի շրջանային վարչության հովանավորության ներքո գտնվող մանկապարտեզը թողարկել է 270 սան: Նրանցից շատերն այսօր զբաղեցնում են պետական բարձր պաշտոններ, ծառայում են ԱԶ պաշտպանության բանակում, որպես սպաներ և շարքային զինծառայողներ,- հպարտությամբ ասում է Գ.Գովհաննիսյանը:

Նա ասաց, որ 2019թ. լրացել է 300-ի Աշանի, Ակնաբերդի և Շուշիի «Սոսե» մանկապարտեզների 15-ամյակը: Այդ կապակցությամբ Աշանում կազ-

մակերպել էին տոնական միջոցառում՝ այդ կերպ շնորհակալություն հայտնելով հովանավորներին Արցախի երեխաների մանկությունը գունդեղ դարձնելու համար:

Մեր գրույցի ընթացքում անդրադառնալով շենքային պայմաններին՝ տնօրենը տեղեկացրեց, որ տարիների ընթացքում պարբերաբար մասնակիորեն վերանորոգումներ են կատարվել: Վերջերս 300-ի միջոցներով լրիվությամբ փոխվել է մանկապարտեզի շենքի ջեռուցման համակարգը, բարերարների միջոցով փոխվել են պատուհանները և դուռը: Առաջիկայում նախատեսվում է փոխել տանիքը և բարեկարգել խաղահրապարակը: Մանկապարտեզում ձևավորված է ավանդույթ. ամեն տարի կազմակերպում են վիճակախաղ, որի ժամանակ հավաքված գումար-



ով մանկապարտեզի համար կատարում են որևէ աշխատանք:

«Մանկապարտեզն ընտանիքից հետո այն միջավայրն է, որտեղ երեխան պետք է ստանա ճիշտ դաստիարակություն, իմանա ճիշտ վարվեցողության կանոնները, ծեռք բերի առաջնային գիտելիքներ: Մենք, որպես մատաղ սերնդի դաստիարակողներ, անում ենք ամեն հնարավոր մեր աշխատանքում հաջողություններ գրանցելու համար: Հաճախակի ենք կազմակերպում ծնողների հետ համդիպումներ, քննարկումներ ու միջոցառումներ: Բացի ծրագրային միջոցառումներից պարբերաբար կազմակերպում ենք տարաբնույթ միջոցառումներ, որոնց հիմքում պարտադիր կերպով հայ ժողովրդի ազգային ավանդույթներն են: Վերջերս կազմակերպել էինք «Հացով մարդ լինենք» խորագրով միջոցառումը, որի ընթացքում մեր սանիկները պատկերացում կազմեցին, թե ինչպես է ստեղծվում հացը՝ ցորենի հատիկից մինչև սեղանին դրված պատրաստի հացը: Միջոցառումներին հրավիրում ենք ծնողների, ուսուցիչների, 300-ուհիների և մանկապարտեզների այլ աշխատողներին: Նմանատիպ միջոցառումները գյուղի բնակիչների համար առօրյա հոգսերից կտրվելու լավագույն միջոց են», - ներկայացրեց տնօրենը և ընդգծեց, որ կրթությամբ յուրաքանչյուր միջոցառում կազմակերպում են նորարարական մեթոդներով՝ երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար:

Ա. ԲԱԲԱՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՏՍԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼ

Սիրվաղը ՄՏԵՓՈՆՅԱՆ

ԱՆՁԵՐԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Պատուհանների ապակիներին հարվածող անձրևի կաթիլների քմահաճ խաղի աղմուկից կինը զարթոնեց: Վաղուց իրեն այսքան լավ չէր զգացել: Ամենօրյա տհաճ ու երկարատև ցավերը լքել էին ասես նրա հոգնած մարմինը: Ժամացույցի տկտկոցը խավարի լռության մեջ արթնացրեցին ծայրահասակ ծերունու, իսկ պատերը դրսից ծեփվում էին անձրևի շիթերով, որոնց կրքերի մոլեգնումին տրված անփույթ ու ակամա հնչող ծայրերի միաձուլումից տարանջատվում էր մի հնագույն կախարհական մեղեդի, ապա խորշերի ու ճեղքերի միջով թափանցում ներս: Չայնային այս ներկայացումը կնոջը երկար զարթուն չքողեց, ու օրորոցային հաճելի մի թմբիր անաղմուկ ու քնքշորեն ծանրացրեց կնոջ կոպերը: Կինը թեքվեց մի կողմի վրա: Բայց երբ կախարհական ելևէջները շոյեցին նրա քունքերը, նա վեր կացավ ու պատուհանը բացեց: Բույները անց խոնավ մի թարմություն ներս խուժեց և կնոջը միանգամից նետեց խոր քնի մեջ:

Այս պահից կինը զգում էր՝ ինչպես է մարմինը ծանրանում ու ձգվում դեպի ներքև: Դա նման էր տապալումի: Հանգիստ ու անտարբեր նա դիտում էր կործանման մի արար: Կար ժամանակ, երբ նա ցավում էր՝ հույս ունենալով որևէ մասունքի փրկության: Բայց դա վաղուց էր... Հիմա ամեն ինչ այլ է, նույնիսկ բավականաչափ հաճելի: Բայց ի վերջո նա կկանգի բուրբ ու նման դատի առաջ: Ու կշահի, որովհետև տառապանք է ու դասեր առել այդ տառապանքից: Նա մեծամարտել է բառի հետ, վերջին խոսքը լռության փեշի տակ պահել ու անլսելի դարձրել իր զենքը: Երբ հոգեվարքի մեջ ծերունին բռնել էր իր որդու ձեռքը, համբուրել ու արցունքներով ողողել, նա փոճկացել էր դա տեսնելով, իսկ հետո այդ խորշումած մատների հպումի ու արցունքների համով ճաշակել իր բոլոր ուտեստները: Ահա նա մոլորված ու շիվար կանգնած է մարմնակույ խորշերի շեմին: Դրանք ոչ մեկը, ոչ երկուսն էին, դրանք անհաշիվ էին... մարդահաշիվ՝ ըստ գլուխների: Ոչ, ըստ մարմինների: Իսկ ո՞վ է թույլ տվել մարմինների հաշվարկ սկսել: Ժամանակը ոչինչ չի փոխում: Ի սկզբանե ու ի վերջո մարմինը մեկն է, և արյան գույնն էլ նույնն է մնացել: Իսկ ինքն այդ շիրմաթմբերի մոտ դեռ շարունակում է չոքել ու աղոթել: Հետո, երբ իր գրկի մեջ նվաղել են մեկը մյուսի հետևից երկու սուրբ ճրագներ, նա գրկել էր մահը ու բաց չէր թողնում, որովհետև դրանից նա կկտրվեր տիեզերքից ու կճանաչեր մարդկության որբությունը: Այս պահից նա հայտարարել է, որ զալակտիկան չունի ոչ մի սահման, ոչ էլ սահմանաձեռն տիրույթներ, կա միայն ժամանակի, կյան-

քի ու մահվան ամբողջականությունը: Եվ անցյալը վերանում է անցյալ լինելուց, մարդն ունի միայն ներկա, իսկ անցյալը լույս խաբկանք է, ժամանակի անհիմաստ վատնում:

Որտե՞ղ է հիմա ինքը: Ժամացույցի ո՞ր սլաքի ուղղությամբ է շարժվում: Քանի դեռ հնարավոր է սավառնումը և սեփական մարմնի տապալումը, զուցե հենց հիմա, հենց այս պահին համարձակորեն ազատվի այդ բեռից, որովհետև վերևում ամեն ինչ այնքան ջինջ ու թափանցիկ է: Թեթև ու անկշիռ սիլուետների մեջ նա վայելում է իսկականը, որն ամուսն չունի, որովհետև նա այլևս չունի մարմին:

Մի պահ միտքը կանգ առավ: Վերև սավառնող երամի բազմաձայնության մեջ մի ծանր տնքոց իրեն ծանոթ ու հարազատ թվաց: Այս անգամ էլ նա փորձեց վերջին թելն էլ կտրել՝ համոզված լինելով, որ դա վերջնական հրաժարում է ու այլևս այդ հետքերին չի անդրադառնա: Աչքի առաջ կողք կողքի կիպ շարք կազմած պատկերների մեջ մանկան մի ձեռք իրեն շատ հարազատ թվաց ու շեղեց նրան իր մտքից: Ինչպես էր, դա այն փորձիկն էր, որին տվել էր հացի իր վերջին կտորը, իսկ ինքը մի ամբողջ օր սոված մնացել: Հարյուրավոր գիշերների մթության մեջ նա տեսավ իր անքնությունը: Վերջինս ընկերացել ու մտերմացել էր այնքան, որ ցերեկվա հանգույցների վրա իր տքնումների վկան էր դարձել: Իսկ գիշերային հազվադեպ երազներում երդում է տվել իր ասպետին սպասել: Թերևս այդ էր պատճառը, որ տարիների որոնումներից նա հավաքել էր միայն սիրո փշուրներ, որովհետև խոյս էր տվել շրջանակներից ու միշտ երկնքին նայել: Եվ դրանից միայն մարմինն է ցավ քաշել, բայց երբևէ չի դավաճանել իրեն: Վերջին մտքից կինը տարօրինակ անհանգստություն զգաց: Նա ասես հասկացավ, որ ուր որ է՝ կինչի վերջին գարկը, և կփակվեն մարմին տանող բոլոր դռները: Նա միայն հասցրեց հասկանալ, որ իրականում սգում է իր իսկ մահը ու ճշաց կորստի ցավից... իր սեփական մարմինը:

Անձրևի շիթերը վաղուց կուլ էին զնացել տարափի ալիքներից: Ծառերն ու ճյուղերի արանքներով տեղ-տեղ ծկրակող լույսի շողերը մոտենում են բաց մնացած պատուհանին, որից այն կողմ անձրևն ավարտել էր իր առաքելությունը: Սենյակի լռությունը հետ քաշվելով՝ մխրճվել է պատերի մեջ, իսկ ժամացույցի սլաքները հավասարվել էին իրար ու կանգ առել: Սենյակում տարածվել է անձրևից հետո խոտերից բարձրացող թարմության կանաչի սուր հոտը...

ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Վերջերս պարոն Վ-ի հայացքում տարօրինակ

ԶԵՐՍ ՍԻՐՈՎ ԱՌ ՀԱՅՐԵՆՅԱՅ՝ ՊԱՇՏՊԱՆ

Մարտունու շրջանի Թաղավարդի Աշոտ Գրաշու անվան միջնակարգ դպրոցում Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձի նախօրեին ուրախ եռուզեռ էր: Չնայած դրան ցուրտ ծնեռ էր ու ծյուն, մեր հոգիներում ջերմություն կար: Այդ օրը երեխաները դպրոց էին հաճախել ոչ սովորական. պայուսակների հետ փաթեթներ ու տոպրակներ էին բերել՝ լի ամուշահամ մրգերով ու քաղցրավենիքով:



Գիկներ են ուղարկել, մաղթել նրանց առողջություն, քաջություն, բազկի գորություն ու ծառայության ընթացքում միմիայն հաջողություններ: Մենք մեր պատմությամբ, ներկայով ու

հուսալի ապագայով օտարներին ամեն օր ապացուցում ենք, որ ունենք այնպիսի հզոր բանակ, որը երբեք թույլ չի տա, որ թշնամին ոտքը դնի մեր սուրբ մահատակների արյամբ շաղախված հողին:

Անսահման սիրով ու մեծ նվիրումով պատրաստած ծանրոցները դպրոցի շեֆ գործադիր սահմանապահներին հասցնելու համար աջակցել են Մարտունու շրջանի արհկազմակերպությունների միությունը և Թաղավարդի համայնքապետարանը: Տեսնելով մատաղ սերնդի պատրաստակամությունն ու նվիրվածությունը զինվորի հանդեպ՝ վստահորեն կարող ենք ասել, որ մեր հաղթական բանակն ունի արժանի հերթափոխ:

Փառք ու պատիվ բազում հաղթանակներ կռած Հայոց բանակին ու մեր խաղաղ այգաբացների երաշխավոր հայ զինվորին:

Մանուշ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թաղավարդի միջն. դպրոցի
ուսուցչուհի

ՈՒՂՂՈՒՄ

«Լուսարար»-ի նախորդ համարի 5-րդ էջում զետեղված **2.2 ԲԱՎԱՆԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ՇՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿ ԱՌՄՈՒՅՈՒՄ)** մասնագիտությունների ցանկից հետո կարդալ՝

• *Նշված մասնագիտություններով Շուշիի տեխնոլոգիական համալսարանի առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության աստեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:*

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusara.info Մեքերունների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 12.02.2020թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: